ՓԳԳԱԵՁԳԺԳ

№ 231 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 231

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ
ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարաբեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան):
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռուդչևսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.
(և.հ.կ.) առ. 784. 100—22

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի:
Ընդունելութիւնը ամեն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից:
առ. (ա. օ.) 0—37 804.

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—13 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

«Վիսլայի ետևում մեր զօրքերը հասնում են Նահանջող թշնամու զօրքերին: Պիլիցայից դէպի հիւսիս գերմանացիք ցոյց տուին թոյլ դիմադրութիւն և ցիրուցան արվեցին դէպի Սկէրնէվիցա: Պիլիցայից դէպի հարաւ, դէպի Ռադոմ տանող ճանապարհներին մենք ստիպեցինք աւստրո-գերմանական զօրքերին լուրջ կռւի բռնվել մեզ հետ: Կռւի ռազմագիծը բռնում էր 40 վերստ տարածութիւն: Ռազմի գործողութիւնները տեղ-տեղ հանդիսման բնոյթ ունեն: Ռադոմի անտառներում մի քանի հետևոտն գնդեր քաջութեամբ սուինային կռիւ սկսեցին: Մի քանի տեղ մենք վերցրել ենք գնդակացիրներ և գերիներ: Իվժանկա գետից վերև աւստրիացիք տակաւին փորձում են ամրանալ Վիսլայի վրա, բայց մեր զօրքերը կռւով անցնում են այդ գետով:

«Սան գետի զօրաճակատում և Պերէմիշլից դէպի հարաւ շարունակվում են յամառ կռիւներ մեր աջողութեամբ: Մեր ձեռքն են ընկնում հազարաւոր գերիներ: Տիչէնիցայի մօտի բարձունքները վերցնելիս՝ Եաբոլաւից դէպի հարաւ՝ մենք գերեցինք աւստրիական հինգ վաշտի: Պերէմիշլից դէպի հարաւ յարձակումը վանելիս գերեցինք 500 հոգու և վերցրինք 9 գնդակացիր: Մեր զօրքի ձախ զօրաթևը, յարձակման դիմելով, նոյնպէս շատ գերիներ վերցրեց, զէնք ու ռազմամթերք: Ստրիյը գրաւող թշնամու զօրամասը յամառ կռւից յետոյ մենք ցիրուցան արինք: Ստրիյում մենք գերեցինք 1000 հոգու:

«Արևելեան Պրուսիայում դրութիւնն անփոփոխ է:

«Ռադոմի և Իվանգորոդի միջև ընկած շրջանում կռիւները շարունակվում են անդադար: Իսկ երբ մենք սկսում ենք հալածել, ընդհարվում ենք աւստրիացիների: Ըստ երևոյթին այդ շրջանում բանակած գերման զօրքերը ուժեղացված են աւստրիական հետևակ գնդերով, որոնք և առաջապահ դիրքերումն են լինում: Այդպիսով աւստրիացիների տուած զոհերի շնորհիւ գերմանացիք ազատվում են կոտորվելուց»:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

«Հոկտ. 10-ին և 11-ին մեր զօրքերը մի շարք պարտութիւն տուին թշնամու առաջապահ գնդերին, որոնք փորձում էին ամրանալ Ռավկա, Սկէրնէվիցա և Բիկա գետակների մօտ:

«Մերոնք սուինային կռիւներով վերցրին Լովիչը, Սկէրնէվիցան և Ռավան: Դէպի Ռադոմ տանող ճանապարհին գերմանացիների հետ միասին Նահանջող աւստրիացիք, օգտվելով անտառոտ տեղից և ստանալով օգնութիւն, ցոյց են տալիս յամառ դիմադրութիւն մեր կարգացող արշաւին: Այստեղ ճակատամարտը մեծ չափեր ընդունեց: Մենք ձեռք ձգեցինք գերիներ, գնդակացիրներ և թնդանօթներ: Սանի վրա և Պերէմիշլից դէպի հարաւ՝ յամառ կռիւները շարունակվում են: Աւստրիացիք փորձեցին ձեռք ձգել մեր ձախ զօրաթևը Պերէմիշլից դէպի հարաւ, բայց վանվեցին խոշոր կորուստներով: Կարպատներից Դոլինա քաղաքի կողմն իջած աւստրիական զօրամասը ջարդվեց ու ցիրուցան եղաւ:

«Նիսկօյից դէպի հարաւ մեր զօրավաշտը, որ անցնում էր Սանը, յարձակման ենթարկվեց թւով գերազանց աւստրիացիների կողմից: Թշնամին պատգամաւորներ ուղարկեց յայտնելու, որ եթէ մեր զօրավաշտը անմիջապէս անձնատուր չը լինի, այն ժամանակ ամենքն էլ կը կոտորվեն: Մեր զօրավաշտը դրան պատասխանեց համազարկերով: Աւստրիացի պատգամաւորները հրաժարվեցին վերադառնալ, խնդրելով համարել իրանց գերիներ:

«Մլավայից դէպի արևմուտք, Բէժուն շրջանում, կօզակ Ֆիլիմոնովը կամաւորների հետ, յարձակվելով խրամատներ փորող գերմանացիների վրա, սպանեց և վիրաւորեց 30 հոգու, յետոյ Լիպնիկի մօտ յարձակվեց պահակախմբի վրա, սրի քաշեց 40 գերմանացու և կորցրեց 2 կօզակ և 4 ձի:

«Առանձնապէս փայլուն էր հետևոտն գնդի յարձակումը, որ սուինային կռիւ սկսեց Լովիչանի փողոցներում, ուր շատ գերմանացի սպանվեցին և 50 հոգի գերվեցին: Բնակիչները օվացիա արին մեր գնդին և ուրախութեամբ ողջունեցին գնդի հրամանատարին»:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—13 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն. «Ձախ զօրաթևում ճակատամարտը շարունակվեց մեծ ոգևորութեամբ, մանաւանդ Արրասի, Լա-Բասսէի և Արմանտիէրի շուրջ: Դաշնակիցները ստիպված էին նահանջել մի քանի կէտում Լա-Բասսէի շրջակայքում, բայց առաջացան Արմանտիէրից դէպի արևելք: Ընից դէպի հիւսիս ֆրանսիական թնդանօթաձիգ վաշտերը ոչնչացրին գերմանական երեք հրետանի»:

Պաշտօնական հաղորդագրութիւն. «Ձախ զօրաթևում կռիւները շարունակվում են: Թշնամին առաջացել է Դիկսմիւդէից դէպի հիւսիս և Լա-Բասսէի շրջակայքում: Մենք բաւականին առաջ ենք գնացել Նիւպօրից դէպի արևելք Լանգէմարկ շրջանում և Արմանտիէրի ու Լիլի միջև: Մնացած զօրաճակատում մենք վանեցինք գերմանացիների յարձակումները: Մենք մի քանի կէտում մասամբ առաջացել ենք: Վէվրի շրջանում մեր արշաւը շարունակվեց Մօրմարի անտառի ուղղութեամբ»:

Լրագիրները հաղորդում են, որ գերմանացիք, տեսնելով որ յաղթութիւնը գնում է իրանց ձեռքից զանազան զօրաճակատներում, յուսահատական ճիգ են գործ դնում Ֆրանսիայի հիւսիսում:

ՊԱՐԻԶ.—Հոկտ. 11-ի երեկոյեան ժամը 11-ին հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւն. «Ծովից սկսած մինչև Արրասից դէպի հարաւ ընկած շրջանը ամենուրեք ետ են մղված թշնամու կատաղի յարձակումները: Արգոնից մինչև արևմուտք մենք գրաւեցինք Մէլզիկուր գիւղը»:

Պաշտօնական հաղորդագրութիւնը խորհուրդ է տալիս հաւատ չընծայել գերմանական գեներալ-շտաբի բիւլլետէններին, որոնցից մէնը պնդում էր, թէ իբր Տրիոկուրի մօտ ֆրանսիացիք վանվեցին խոշոր կորուստներով: Իսկապէս՝ ֆրանսիացիների առաջխաղացումը այդ ուղղութեամբ չէր կարող պաշտպանութիւն գտնել բոլոր այն կէտերում, ուր ֆրանսիացիք հասան այդ առաջխաղացումով: Սակայն ֆրանսիացիք ընդհանուր առմամբ պահեցին իրանց գրաւած կարևոր դիրքերի մեծ մասը: Առաւօտը ֆրանսիական զօրքերի հրամանատարի մօտ եկաւ պատգամաւոր, խնդրելով զինադադար կայացնելու մասին, որպէս զի կարելի լինի թաղել սպանվածներին և ժողովել վիրաւորվածներին: Զօրահրամանատարը մերժեց և յարձակումը վերսկսեց: Նոր յարձակումը ֆրանսիացիներին հնարաւորութիւն տուեց աջողութիւն ձեռք բերել, որոնց գերմանացիք կամենում էին ձեռք բերել զինադադարի միջոցով:

Պաշտօնապէս հաղորդվում է, որ ծովի և Արրասի շրջանում ոչինչ փոփոխութիւն տեղի չունեցաւ: Արգոններում մեր դրութիւնը չը փոխվեց երէկվանի դէմ: Մասսի աջ ափում մեր դաշտային թնդանօթաձիգ վաշտերը ոչնչացրին գերմանացիների երեք հրետանի:

ԿԱՊՇՏԱԴ.—Գնդապետ Մարիցը հոկտ. 9-ին ռմբակոծեց Կէյմօյսը: Թշնամին ետ մղվեց և գերի տուեց 4 օֆիցէրի, որոնց թւումն է կամս Շվէրինը:

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—13 հոկտեմբերի

ՆԻՇ.—Հոկտ. 7-ին թշնամին բօսնիական ամբողջ զօրաճակատում յարձակում գործեց սերբերի և չերնօգօրցիների վրա: Բոլոր յարձակումները վանվեցին: Թշնամու զօրամասերից մի քանիսը ստիպված էին նահանջել անկարգ: Հալածելով նրանց, սերբերը և չերնօգօրցիք բաւական առաջացան:

Չերնօգօրցիք Բօրիվակի մօտ ետ մղեցին թշնամուն և ձեռք ձգեցին լեռնային մի թնդանօթ, 9 արկղ ռազմամթերք և շատ հրացան: Հոկտեմբերի 8-ին կռիւը շարունակվեց բօսնիական ամբողջ զօրաճակատում սերբերի մասնակցութեամբ: Մեր զօրքերը վանեցին թշնամուն և գերեցին 200 հոգու: Չերնօգօրցի զօրքերը թշնամու կատաղի յարձակումներից մի փոքր ետ եկան:

ՑԵՏԻՆԻԷ.—Սարաէվի շրջակայքում չերնօգօրցիները և սերբերը հոկտեմբերի 6—9 տաք կռիւներ ունեցան աւստրիացիների դէմ: Թշնամին, շարունակ օգնութիւն ստանալով, սիստեմատիկօրէն յարձակումներ էր գործում սերբերի և չերնօգօրցիների վրա, բայց լուրջ վնասներ կրեց: Թշնամու գերազանց ոյժերի պատճառով՝ սերբերը ստիպված են ետ քաշվել իրանց դիրքերը: Աւստրիացիք մնացել են իրանց դիրքերում և արիութիւն չունեցան վանել մեր զօրքերին իրանց դիրքերից:

ԲԵԼԳՐԱԴ.—Թշնամին անցեալ գիշեր ռմբակոծեց Բելգրադի արևելեան դիրքերը և Բելգրադի մի քանի թաղ: Սերբերի թնդանօթային կրակը շուտով ստիպեց լռել թշնամուն:

ՑԵՏԻՆԻԷ.—Երէկ Անտիվարիի վրա թռչում էին երեք աւստրիացի աէրօպլան, որոնց նետած ռումբերը վնաս չը տուին:

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—13 հոկտեմբերի

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Սավայի մօտ տեղի ունեցած կռւից յետոյ վերադառնալիս աւստրիական գետային մի նաւ կպաւ ականի և ջրասուզվեց. խեղդվեցին 30 մարդ:

ԲՈՐԴՕ.—Ծովային վարչութեան պաշտօնական հաղորդագրութիւնը պարզում է դաշնակիցների նաւատորմերի վերջին գործողութիւնների էութիւնը և ընդգծում է, որ ֆրանսիական «Բրիւի» և «Սիւպրիզ» ռազմանաւերը ռմբակոծեցին Կամպօ և Կրիբիլի պահակավայրերը՝ Կամէրունում:

Աւստրիական սուզանաւ մի նաւ Կատտարօյի ջրերում ապարդիւն տեղը ռմբակոծեց ֆրանսիական «Վալդէկ Ռուսսօ» ռազմանաւը:

ԲԵԼԳՐԱԴ.— Աւստրիական մի մեծ ռազմանաւ Շաբացի և Սկելայի միջև կպաւ ականի և արագութեամբ յատակն անցաւ: Նաւաստիների մի մասը խեղդվեց:

ԼՈՆԴՈՆ.—Անգլիական «Բէջէր» հակատորպեդանաւը ջրասոյզ արեց գերմանական մի սուզանաւ Հոլլանդիայի ափերի մօտ: Հակատորպեդանաւի ծայրը թեթև վնասվեց:

Ծովակալ Գուդը տեղեկացնում է, որ անգլիական նաւատորմը մի օրվայ ընթացքում ենթարկվեց թշնամու յամառ յարձակման: Մի սուզանաւ նաւ ականներ նետեց անգլիական երկու շոգենաւի վրա, որոնք, սակայն, վնաս չը տուին: Նաւատորմը հոկտ. 1-ին նոյնպէս ենթարկվեց յարձակման աէրօպլանների կողմից, բայց չը վնասվեց:

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Ծովային մինիստրի հեռագիրը յանուն Բալտիկ ծովի նաւատորմի հրամանատարի սեպտ. 30-ից. «Թագաւոր Կայսրը հրամայել բարեհաճեց հաղորդել ձերդ բարձր գերազանցութեանը և ձեզ ենթակայ նաւատորմի բոլոր պաշտօնեաներին Իր շնորհակալութիւնը նաւատորմի ռազմի գործունէութեան համար, որ անցաւ աշնան ծանր պայմաններում, ականների և սուզանաւ ռազմանաւերի մշտական վտանգի մէջ, որոնցից մէկին, դժբաղդաբար, աջողվեց ջրասուզել ամբողջ նաւաստիների հետ «Պալլադա» յածանաւը: Շնորհիւ նաւաստի զինւորների տոկունութեան ու շնորհքին Բալտիկ ծովի նաւատորմը աջողութեամբ կատարում է իր վրա դրված յանձնարարութիւնը ծովափը և մայրաքաղաքը պաշտպանելու իմաստով, աջակցելով ցամաքային զօրքերին: Մեր յանդուգն թշնամուն, չը նայած գերազանց ոյժերին, չաջողվեց ձեռք բերել և ոչ մի էական արդիւնք: Թագաւորը հաւատում է, որ Աստուած վերջնական յաղթութեամբ կը պսակէ ռուս նաւաստիների ռազմի աշխատանքը ի փառս թանգագին հայրենիքի»: Ստորագրեց գեներալ-ադիւտանտ Գրիգորովիչ:

ԼՈՆԴՈՆ.—Ծովակալութիւնը հաղորդում է, որ հոկտ. 11-ին անգլիական մօնիտորները և այլ ռազմանաւեր, համակերպելով իրանց գործողութիւնները բէլգիական զօրքի գործողութիւնների հետ, աջողութեամբ ռմբակոծեցին գերմանացիների աջ զօրաթևը: Նիւպօրի դէմ ուղղված գերմանական յարձակումները ետ են մղված գերմանացիների համար խոշոր կորուստներով:

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—13 հոկտեմբերի

ՎԱՐՇԱՎԱ.—Զինւորական գեն.-նահանգապետն արգելեց պարտադիր որոշումով արտահանել քաղաքից, առանց աւագ-ոստիկանապետի թոյլտւութեան, կենսական մթերքներ:

Ուսումնական զբաղմունքները վերսկսվեցին ստորին տարրական դպրոցներում:

ՍՕՖԻԱ.—Բուլգարական հեռ. գործակալութիւնը կտրուկ կերպով հերքում է այն լուրը, որ տարածված է Պետրօգրադի քաղաքական շրջաններում, թէ իբր Բուլգարիան կնքել է Թիւրքիայի հետ պաշտպանողական և յարձակողական դաշն, ուղղված Սերբիայի, Ցունաստանի և Ռումինիայի դէմ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերագոյն խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Գօրեմիկինի միջնորդութեան համաձայն, մինիստրների խորհուրդը որոշեց յատկացնել պետական գանձարանից գերագոյն խորհրդի տրամադրութեան տակ մի միլիօն րուբլի՝ պատերազմի կանչված զինւորների ընտանիքներին խնամելու ծախքերը ծածկելու համար:

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ.—Գալիս են Ֆինլանդիայի քաղաքների ներկայացուցիչներ՝ վիրաւոր զինւորներին օգնելու հարցի քննութեան համար: Ներկայ են 31 քաղաքների ներկայացուցիչներ: Զօրս քաղաք, ի թիւս որոց Վըբօրգը, չեն մասնակցում: Նախագծված է հաստատել հիւանդանոց 1500 մահճակալով:

ՊԱՐԻԶ.—Լրագիրները մատնանշում են, որ գերմանացիք յուսահատական ճիգ են գործ դնում ճեղքելու դաշնակից զօրքերի ռազմագիծը: «Գօլուան» գրում է, որ Վիլհէլմը հրաման է արձակել տիրելու Կալէին, որպէս զի ռազմագիրք լինի Անգլիայի դէմ գործելու համար: «Մատէնը» ասում է, որ Եւրոպայի և ամբողջ աշխարհի բաղդը շարունակվում է տնօրինվել Ֆլանդրի դաշտերում: Գերմանական կայսրը իր թագի, պետութեան և իր կեանքի լինելու կամ չը լինելու հարցն է դնում մէջտեղ: «Էքօ-դը-Պարին» յայտնում է, որ գերմանացիք սպառել են իրանց վերջին բնաւորները. բոլոր նրանց յարձակումները ջարդվել են: Շուտով Ֆլանդրիայում կը հնչէ վերջին փողերի արձագանքը ռուսական սահմանի կողմից:

ՎԱՐՇԱՎԱ. — Վարշավայի հռոմէական-կաթոլիկ արքեպիսկոպոս Կակօվսկին արժանացաւ ստանալ Բարձրագոյն հետևեալ հեռագիրը.

«Հռոմա-կաթոլիկների արքեպիսկոպոս Կակօվսկիին: Շնորհակալ եմ Տէր Աստուծոյ՝ Վարշավան թշնամու գրաւումից ազատելու համար. Սրտագին միանում եմ ձեր հօտի ուրախութեանը այդ առիթով և շնորհակալութիւն բոլորին՝ աղօթքների ու հպատակութեան զգացմունքների համար:

ՆԻԿՈԼԱՅ

Բարձրագոյն հեռագիրը եղաւ պատասխան հետևեալ ամենահպատակ հեռագրի.

«Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին. Աստուծոյ ողորմութեամբ և Ձերդ Կայսերական Մեծութեան կամքով թշնամու արշաւանքից ազատված Վարշավայի կողմից: Կատարելով հանդիսաւոր գոհաբանական աստուածպաշտութիւն, ես համարձակվում եմ առ ոտս Ձեր Կայսերական Մեծութեան արկանել իմ և իմ ամբողջ հօտի կողմից խորագոյն շնորհակալութեան և ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունքներ: Վարշավայի հռոմա-կաթոլիկների արքեպիսկոպոս Կակօվսկի»:

ՍՕՖԻԱ.—Պաշտօնական «Էքօ-դը-Բիւլգարի» գրում է, որ թիւրք-բուլգարական յարաբերութիւնները մնում են մշտապէս լաւ այն րօպէից, երբ մակեդոնական հարցը դադարեց առաւելապէս թիւրք-բուլգարական հարց լինելուց: Որպէս զի ապրեն բարի հարևանութեամբ, Բուլգարիան և Թիւրքիան կարիք չունեն իրական դաշինքի, որը գոյութիւն էլ չունի:

ՀՌՈՄ.—Ռուսաց դեսպան Կրուպէնսկին, գալով հիւպատոսարան, յայտնեց մինիստր-նախագահ Սալանդրային՝ Պետրօգրադից Հռոմի ռուսաց դեսպանատանը հասցէագրված հեռագիրը հետևեալ բովանդակութեամբ.

«Թագաւոր Կայսրը, կամենալով ապացուցել դէպի Իտալիան տածած իր խոր համակրութիւնը, մտադիր է ազատել իտալական ազգութեան աւստրիական գերիներին, եթէ Իտալիայի կառավարութիւնը յանձն առնէ ապահովելու, որ պատերազմի ամբողջ ընթացքում նրանք չեն մտնի նորից աւստրիական զօրքի մէջ»: Սալանդրան, ի պատասխանի յայտարարութեան, խնդրեց դեսպանին՝ յայտնել իտալական կառավարութեան խորին շնորհակալութիւնը ողորմած ուշադրութեան համար, բայց նկատեց, որ Բարձրագոյն ողորմածութեան իրականացումը կարող է շատ դժուարութիւններ առաջ բերել, ի նկատի ունենալով որ վերին աստիճանի վտանգաւոր է փոխադրել գերիներին Ռուսաստանից Իտալիա և որ անհնարին է իտալական կառավարութեանը երաշխաւորել, թէ ոչ ոք գերիներից Իտալիայից չի մտնի Աւստրիա և նորից չի դառնայ աւստրիական զինւոր: Ցամենայն դէպս, հարցը անյապաղ կը քննվի իտալական արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

ՆՈՐ-ՈՒՐԳԷՆՉ.—Խիվայի խանը գործող բանակին ուղարկեց 1000 կիսամուշտակ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պետրօգրադից երէկ ստացանք հետևեալ հեռագիրը. «Պետրօգրադում կան շատ թւով հայ վիրաւոր զինւորներ: Սպասւում են նոր վիրաւորներ ևս: Բարոյական և նիւթական օգնութիւն հասցնելու համար կազմված է ուսանողներից և Պետրօգրադի հայերից բաղկացած միացեալ բիւրօ: Զգացվում է մեծ կարիք հայ ժողովրդական գրքերի և լրագիրների: Խնդրում ենք հայ ազգաբնակութեանը արձագանք տալ և շուտափոյթ ուղարկել թէ գրքեր և թէ լրագիրներ հետևեալ հասցէով. Петроградъ, Невскій № 40, казначею попечительнаго объ армянахъ о-ва Е. Г. Асрибековой. Պետրօգրադում և շրջակայ վայրերում գտնվող բոլոր վիրաւոր հայ զինւորների անուանացուցակը իր ժամանակին կը հրատարակվի հայ լրագիրներում: Խնդրում ենք միւս լրագիրներին արտատպել այս: Վարչութիւն»:

◆ «В. В.»-ին հեռագրում են Կ. Պօլսից, թէ Բեռլինում հրատարակված պաշտօնական ցուցակներից երևում է, որ պատերազմի երեք ամիսների ընթացքում գերմանացիներից սպանվել, վիրաւորվել և անհետ կորել են կէս միլիօն մարդ:

◆ Գերմանացիների ասելով, իրանք գերել են 20,000 անգլիացու:

◆ Գերմանացիք Լօձի բնակիչներից պահանջել են 100,000 րուբլու ուտեստեղէն:

◆ Վարշավայի շրջակայքում տեղի ունեցած կռիւներին վարշավացիներն այն աստիճան սովորեցին, որ հրապարակային դասախօսութիւնները հանգիստ կերպով կատարվում էին թնդանօթաձգութեան ներդաշնակութեամբ:

◆ Պատերազմի դաշտում սպանվել է շտաբս-կապիտան Լևոն Գրիգորեան Գարայեանց, վիրաւորվել է պօդպօրուչիկ Կոնստ. Անդ. Եղիզարեանց:

◆ Տեղեկութիւններ կան, որ աւստրո-գերմանական գլխաւոր բանակը գտնվում է Սիլեզիայում։

◆ Կիէվ տարվեցին 24 վագոնով թնդանօթներ և գնդակացիրներ, վերցված Պերեմիշլի մօտ։

◆ Բեռլինից ծածկագիր հեռագրով Պեկինի գերմանական դեսպանին են ուղարկվել Ցինդաօն ճապօնացիներին յանձնելու պայմանները։

◆ Պատերազմի դաշտից Մօսկվա վերադարձած պատգամաւոր Մակլակովը մեծ գովասանքով է խօսում ռուս զինուորների մասին։

◆ Հաագայից հեռագրում են, որ բէլգիացի փախստականները հայրենիք են վերադառնում։

◆ Գերմանացիք ամրացնում են Ստրասբուրգը։

◆ Երբ Պուանկարէն ֆրանսիական գործող բանակում գեներալիսիմուս Ժօֆֆրի մօտ էր, գերմանական մի աէրօպլան ռումբ նետեց նրանց գտնված տեղը, սակայն, բարեբաղդաբար, ռումբը չը պայթեց։

◆ 40,000 հնդկական զօրք նորերս ափ են իջել Մարսէլլում։

◆ Օստենդէի և Լիլի միջև մեծ ճակատամարտը շարունակվում է։

◆ Անգլիացի բանուորների խմբեր են մեկնել աւերված ֆրանսիական երկաթուղիները վերանորոգելու համար։

◆ Ֆրանսիական կառավարութիւնը յարքունիս է գրաւել գերմանացիների գոյքը։

◆ Գնդակացիրների հնարող Մաքսիմը հնարել է նոր մեծ ուժի ռումբ դիրիժաբլները և աէրօպլանները ոչնչացնելու համար։

◆ Ստորջրեայ ռազմանաւերի գիւտն արած ամերիկացի Հօլլանդը նորերս մեռել է 73 տարեկան հասակում։

◆ Մինիստրների խորհուրդը որոշել է դադարեցնել Ռուսաստանում լոյս տեսնող բոլոր գերմանական թերթերը առաջիկայ յունվարից։

◆ Լուրերի համաձայն, բալկանեան նոր դաշնակցութիւն է հաստատվում Սերբիայի, Ռումինիայի, Յունաստանի և Բօլգարիայի մասնակցութեամբ։

◆ Անգլիական պարլամենտի 109 անդամ ներկայումս իբրև կամաւոր զինուոր գտնվում են անգլիական զօրքի մէջ։

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—13 հոկտեմբերի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Բ. Դուռը պաշտօնապէս յայտարարում է, որ բուլղարական ծովափով անցնող նաւերը պէտք է ականներից խուսափելու համար անցնեն ափից 12 մղոն հեռաւորութեան վրա։ Լուրերի համաձայն, ականները դրել են իրանք թիւրքերը Բոսֆորի ամբողջ մուտքի մօտ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Աւստրիական աղբիւրներից տեղեկացնում են, որ թիւրքաց մինիստր Ջէմալ-փաշայի ուղևորութիւնը Դարդանէլ բացատրվում է նեղուցներում ականների տեղերը փոխելու ցանկութեամբ։ Նկատվեց, որ անգլօ-ֆրանսիական նաւատորմը, որ այդ տեղին մօտեցել էր սեպտ. 27-ին, վարժութիւններ կատարեց այնպէս, որ կարելի էր գուշակել, թէ նա ծանօթ է թիւրքական ականների տեղադրութեան հետ։ Ականների տեղը գիտէր ծովակալ Լիմպուսը՝ Կ. Պոլսի անգլիական ծովային միսսիայի պետը, որ, հաւանօրէն, այդ մասին էլ յայտնել է դաշնակիցներին։

(Լրագիրներից)

◆ Կ. Պոլսից ստացված վերջին տեղեկութիւնների համաձայն, Էնվէր-փաշայի և գեներալ Սանդէրսի միջև սկսված տարաձայնութիւնը շատ սուր կերպարանք է ստանում, որովհետև Սանդէրսը վերացնում է Էնվէր և Ջէմալ փաշաների կարգադրութիւնները։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ դաշնակից նաւատորմին կարգադրված է կռւող տէրութեան ռազմանաւեր համարել Թիւրքիայի բոլոր առևտրանաւերը, որոնք դուրս կը գան նեղուցներից։

◆ Կ. Պոլսից ստացված վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այնտեղ հակագերմանական հոսանքն ուժեղանում է։ Էնվէր փաշայի բնակարանը պաշտպանվում է զօրքերով։ Գահաժառանգի կարգադրութեամբ՝ հսկողութիւն է նշանակված գերմանացի գեներալ Սանդէրսի և ծովակալ Սուշօնի վրա։ Դեսպան Վագենհէյմը շարունակ հեռագիրներ է ուղարկում Բեռլին թիւրքաց քաղաքականութեան մէջ առաջ եկած նոր յեղաշրջման առիթով։ Երրեակ համաձայնութեան պետութիւնների դեսպանները հենց այդ պատճառով էլ յետաձգեցին իրանց մեկնելը Կ. Պոլսից։

◆ Կ. Պոլսից լուր է ստացվել, որ «Մ. և Ա.» կոմիտէի հակառակ հոսանքը մահվան վճիռ է կայացրել Էնվէր փաշայի վերաբերութեամբ։ Դրութիւնն այն աստիճան լարված է, որ անկարգութիւններն անխուսափելի են համարվում։

◆ Կ. Պոլսից հեռագրում են «Р. Сл.»-ին, որ Էնվէր փաշան մեկնեց Ադրիանուպօլիս, որպէսզի այնտեղի զօրքերին, որոնք հաւատարիմ են գահաժառանգին, թեքէ իր կողմը։

◆ Կ. Պոլսից տեղեկացնում են, որ «Deutsche Bank»-ը 300,000 ստեռլինգ յանձնեց Թիւրքաց կառավարութեանը թիւրքական դրամ ձուլելու համար։ Յիշեալ բանկը այս օրերս Բեռլինից ստանալու է մի միլիօն թիւրքական ֆունտ, որպիսի գումարը անց է կացվելու Ռումինիայի վրայով։

◆ Կ. Պոլսից էմիսարների առաքումը դէպի Կովկաս և Պարսկաստան շարունակվում է։ Ի միջի այլոց ուղարկված են Կ. Պոլսում ապաստանած պարսիկ յեղափոխականները։ Ուղարկվել են նաև 10 մուշտէիդ։

◆ Ռումինիայի վրայով Թիւրքիա ուղարկվեց գերմանական երկու աէրօպլան՝ բաժանված մասերով։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ «Գեբէն» և «Բրեսլաու» ռազմանաւերի հրամանատարները հրաժարվեցին ենթարկվել Սև ծովը չելնելու կարգադրութեանը։ Ծովային մինիստրն առաջարկում է նաւերը, ծով ելնելու դէպքում, յայտարարել ապստամբված և դիմել մեծ պետութիւններին՝ խնդրելով բռնել նրանց, որովհետև, ինչպէս մինիստրն է ասում, «իրապէս ռազմանաւերը մերը չեն»։ Թիւրք օֆիցէրներին և նաւաստիներին չեն ընդունում այդ նաւերի վրա ծառայութեան։ Ծովակալ Սուշօնը գերմանացիների նշանակեց թիւրք ռազմանաւերում։

◆ Թիւրքաց բարձր ղեկավար շրջանները կողմնակից են Դարդանէլը բանալուն, ի նկատի ունենալով որ թիւրքաց նաւերին սպառնում է միայն առանց քարածուխի։

◆ Լուրերի համաձայն, Կ. Պոլսի ռուսաց դեսպան Գիրսը մեկնել է։

◆ Կ. Պոլսում նշանակվել է մի զինուորական մասնաժողով Ադրիանուպօլսում տեղի ունեցած դէպքերի պատճառները պարզելու համար։ Կալանաւորվել են մի քանի յոյներ և հայեր։ Վիրաւորների մեծ մասը թիւրքեր են։ Մանրամասնութիւնները գաղտնի են պահվում։

◆ Վիլհէլմ կայսրի գաղտնի նամակով Կ. Պոլիս եկաւ գնդապետ ֆօն Րէյխէլը։

◆ Մի շոգենաւով անյայտ ուղղութեամբ Կ. Պոլսից աքսորվել են մի քանի տասնեակ թիւրքուհիներ, որոնք բողոքում էին երկիրը քայքայող քաղաքականութեան դէմ։ Նրանց գլուխ է կանգնած թիւրքական կանանց ազատագրական շարժման ղեկավար Մելիքա խանումը։

◆ Պետրօգրադի դիւանագէտները բնաւ չեն փոխում իրանց յոռետես կարծիքը նոյն իսկ Թիւրքաց գեներալիսիմուսի պաշտօնում գահաժառանգին նշանակելուց յետոյ, գիտենալով որ վերջինս այն տեսակ անբարեացակամ վերաբերմունք ունի դէպի երրեակ համաձայնութիւնը, ինչպէս Էնվէր փաշան, Թալէաթ-բէյը և միւսները։ Գահաժառանգի և Էնվէրի սուր յարաբերութիւնն աւելի շատ անձնական հողի վրա է։

◆ Կ. Պոլսում կազմակերպվել է համամահմեդական ինքնապաշտպանութեան կոմիտէ, որ իսկապէս «Մ. և Ա.» կոմիտէի մի ճիւղն է։

◆ Բ. Դուռը յայտնել է Ֆրանսիային, որ նա զրկվել է կաթօլիկներին հովանաւորելու իրաւունքից։

ԶԻՆՈՒՈՐԻ ՆԱՄԱԿԸ

«Рѣчь»-ում տպված է մի զինուորի նամակ, որը ուղարկել է իր կնոջը Պետրօգրադ։

Ահա այդ նամակը իր անպաճոյճ բովանդակութեամբ.

«Թանգագին Մարֆուշա! Յայտնում եմ քեզ, որ Գալիչ քաղաք են ասում, մենք նրան վերցրինք»... Այնուհետև նա յիշում է մի շարք մարդկանց անուն-ազգանուն, որոնց բարևում է։

«Գալիչ քաղաքը մենք վերցրինք, և էդ կռւի ժամանակ կորցրինք մեր հրամանատար կապիտանին, շտաբս-կապիտանին և բօլ զինուոր։ Համա ես ու Կրուտիլովը մնացինք անվնաս։ Իսկ ինչպէս մի կռւի մէջ ընկանք, որ մտածում էինք թէ էլ չենք պրծնի։ Բայց Տէրը մեզ պահեց, ինչպէս որ մեր խօթ սրի տակ ընկան 100 թշնամի։

«Երբ մտանք մենք մի տուն՝ ես առաջից, Կրուտիլովը ետևից, գնդակները կարկուտի պէս թափվում էին, բայց Տէր Աստուածը պահպանեց մեզ։ Մեր ետևից եկան հինգ մարդ էլ, ինչպէս որ բարձր գոռալով աւստրիացիներին սարսափեցրինք և ստիպեցինք հրացանները վէր ձգել։ Հէնց էդտեղ մենք տեսանք, որ նրանք ոչ թէ քիչ են, այլ 100 հոգի։ Նրանք իրանց ձեռները մեկնում էին մեզ, լաց լինում և համբուրում մեր ձեռները։

«Դէ, մենք էլ, ի հարկէ, քաղցր խօսքերով ընդունեցինք նրանց և ղրկեցինք շտաբը. էդտեղ են ղրկում բոլոր գերիներին։

«Իսկ մեր կապիտանը և շտաբս-կապիտանը, որ վիրաւորված ընկած էին փոսի մէջ, երբ լսեցին մեր էս յաղթութեան մասին, լաց եղան ու շնորհակալութիւն յայտնեցին մեզ։ Մեր զօրքի հրամանատարը, որ մօտիկ ականատես է եղել մեր էս կռւին, մէկէլ օրը չորս անգամ շնորհակալութիւն յայտնեց մեզ և դրա համար էլ մեր ռօտին ղրկեց սայլերի մօտ հանգստանալու։

«Հիմի Թագաւորը հրամայել է, որ մեզ մի շաբաթով հանգստութիւն տան, ինչպէս որ էլ դժուար թէ կռւի գնանք։

«Ինչպէս որ մեր զօրքերը գնում են Կրակով քաղաքի վրա։ Ինչ լաւ կը լինի, եթէ Տէրը օրհնի, որ մենք էդ քաղաքը վերցնենք. մեծ բերդ է։ Հիմի մենք կռւից 15 վերստ հեռու ենք, սահմանից 140 վերստ, իսկ Պետրօգրադից հեռու ենք՝ 1400 վերստ։

«Ինչ որ լրագիրներում կը գրեն, նամակներում մի-մին գրի. մենք լրագրի երես չենք տեսնում։ Մի բան էլ եմ խնդրում, սիրելի Մարֆուշինկա. ինձ ու Կրուտիլովի համար 1 ֆունտ մախօրկա ղրկիր, թէ չէ էստեղ փողով ոչ մի տեղ էլ չենք կարող առնել։ Մի ֆունտ էլ շաքար։

«Ինչպէս է իմ բալիկը, Կօլինկան. ինչպէս ես դու, ողջ-առողջ, իմ Մարֆուշինկա-ջան։

«Դէ նոր ասելութիւն։ Մնամ ողջ-առողջ քո Պաւել Ֆիլիպովիչ»։

Նամակը գրված է սեպտեմբերի 10-ին։

ԵՐԲ ԿԸ ՎԵՐՋԱՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ահա մի հարց, որ հաւասարապէս հետաքրքրում է և յուզում ամենքին։ Երբ սկսվեց պատերազմը, ամենքը հաստատ վստահութեամբ ասում էին, որ ներկայ պայմաններում պատերազմը ոչ մի կերպ չի կարող երկարել երկու-երեք ամսից աւելի։ Այդ երկու-երեք ամիսները անցան, և այժմ, ինչպէս յուլիսին, այդ հարցին անկարելի է որոշ պատասխան տալ։

Այդ տեսակէտից հետաքրքրական է լսել մասնագէտների կարծիքը։

Այս օրերս յայտնի ֆրանսիացի գիտնական Պօլ Լերուա Բօլիէօն Պարիզում գիտութիւնների ճեմարանում մի զեկուցում է կարդացել հետևեալ վերնագրով. «Ներկայ պատերազմի տևականութեան մասին»։

Ռեֆերատի տուեալների համաձայն, պատերազմին մասնակից է 437 միլիօն ժողովուրդ. երկրագնդի ազգաբնակութիւնը կազմում 1 միլիարդ 700 միլիօնից։ Այսինքն Ռուսաստանը՝ 171 միլիօն, Ֆրանսիան՝ 39 միլ., Անգլիան՝ 45 միլ., Բէլգիան՝ $7^1/_2$ միլ., Սերբիան՝ $4^1/_2$ միլ., Չերնօգօրիան՝ $^1/_2$ միլ., Ճապօնիան՝ $53^1/_2$ միլ., Գերմանիան՝ $66^1/_2$ միլ., Աւստրօ-Ունգարիան $49^1/_2$ միլ.։ Դրան պէտք է աւելացնել գաղութների ազգաբնակութիւնը՝ 12 միլ. Ֆրանսիական Աֆրիկայից, 25 միլ. անգլիական գաղութներից—բացի Հնդկաստանից—320 միլ. Հնդկաստանից, 63 միլ. եւրօպական միւս գաղութներից։

Ուրեմն, մինչդեռ անդրադարձել է 857 միլ. ժողովրդի դրութեան վրա։ Ողջ աշխարհը բաժանվել է երկու բանակի. 116 միլիօն մարդիկ՝ աւստրօ-գերմանական բանակի—ընդդէմ հակագերմանական 321 միլ. բանակի։ Ռուսաստանը և Անգլիան ունեն մարդկային անսպառ ուժեր։

Պատերազմի տևականութեան ազդելու են ոչ այնքան առանձին, փոքրիկ ու մեծ կռիւները, որքան այլ բնոյթ ունեցող պատճառներ։ Պատերազմը աջողութեամբ վարելու համար անհրաժեշտ են անթիւ քանակութեամբ սննդական և ռազմական մթերքներ։

Գործին ամենահանգիստ և անաչառ վերաբերվելով առաջին իսկ հայեացքից պարզ երևում է, որ Գերմանիայի դէմ կռւող եւրօպական ոչ մի պետութիւն ոչ առաջին և ոչ միւս մթերքների պակասութիւն չի զգայ։ Բայց այլ դրութեան մէջ են գտնվում Գերմանիան և Աւստրիան։ Երկու պետութիւնն էլ միանգամայն կտրված են մնացած աշխարհից։ Սննդական մթերքների ներմուծումը այդ երկիրներում այնքան գերազանցում էր արտահանման, որ այդ երկու մեծութիւնների համեմատութեան մասին խօսք անգամ չի կարող լինել։ Չը պէտք է հաւատալ այն լուրերին, թէ Գերմանիայում արդէն սով է սկսվել։ Այդ ճիշդ չէ, բայց անպայման ճիշդ է այն, որ կարճ ժամանակից յետոյ սովի ուրուականները դաշնակից զօրքերի հաւատարիմ արբանեակները կը դառնան։ Գերմանիայի համար աւելի վատ է այն հանգամանքը, որ նրանում անհրաժեշտ մթերքների պակասութիւն է զգացվում յաճախ ռազմական բնոյթ ունեցող, հետզհետէ սպառվում է ռումբ, գնդակ և այլ հրանիւթեր պատրաստելու նիւթեղէնը։

Պօլ Լերուա-Բօլիէօյի կարծիքով պատերազմը կը վերջանայ այն ժամանակ, երբ սպառվի թշնամու սննդական և ռազմական մթերքների պաշարը։

ՈՒՂԵՐՁ ԲԷԼԳԻԱՑԻ ԿԱՆԱՆՑ

«Н. Вр.»-ի ասելով՝ մի խումբ ռուս կանայք, մինիստրների խորհրդի նախագահի ամուսին տիկ. Ա. Ի. Գօրեմիկինայի նախաձեռնութեամբ, հետևեալ ուղերձն են յղել բէլգիացի կանանց։

Ահա այդ ուղերձը։

⁂

Բէլգիացի կանանց!

Ֆլանդրիայի և Բրաբանտի գեղեցիկ հողերը խուժած նոր բարբարոսների հորդաների հետ ունեցած ձեր պայքարի արնաւալի ժամին, ձեզ, Լիէժի, Լովէնի, Մալինի և Անտվերպէնի հերոսների մայրեր, քոյրեր, կանայք և աղջիկներ, ռուս կանայք Բէլգիայի հերոսական պաշտպանութեան առաջ իրանց անզուսպ հիացմունքի և եղբայրական ողջոյնն են ուղարկում։

Արիւնոտ վայրագութեամբ տարված, խախտելով հէնց իր ստորագրած պայմանագիրը, մոռացութեան տալով մարդկային բոլոր օրէնքները և ոտնահարելով մարդասիրութեան մասին եղած ամեն մի միտք, ներս խուժեց գերմանական կործանիչը Բէլգիայի սահմանները և ամեն ինչ սրի ու հրի տուեց։ Վիրաւորելով և մահացնելով երեխանց ու կանանց՝ իր սրբապիղծ ձեռքը բարձրացրեց ձեր տաճարների և ընտանեկան օջախների վրա։

Իր փառաւոր Թագաւորին գլուխ ունենալով, իր իրաւունքի անյաղթելի հզօրութեամբ, ամբողջ Բէլգիան միահամուռ ոտքի կանգնեց թշնամու դէմ և իր ասպետական արիութեամբ հիացմունք պատճառեց քաղաքակիրթ աշխարհին։

Ամենաբարձրեալին ենք առաքում մեր ջերմ աղօթքները. թող վերջնական հանդիսաւոր արդարութիւն շնորհի Նա այժմ ձեզ, թող հանգստութիւն և բաղդաւորութիւն վերադարձնի ձեր ընտանիքներին և թող օգնական լինի ձեզ բաժին ընկած ծանր փորձութիւնները մինչև վերջը կրելու։

Ձեզ ամենքիդ, նոյնպէս ձեր մեծ անձնազոհ Թագուհուն, որ նուիրել է իրան վիրաւորներին խնամք տանելու և անբաղդներին օգնելու գործին, ձեզ ամենքիդ բերում ենք մեր սրտանց և անկեղծ ցաւակցութիւնն ու մեր ջերմագին սէրը։

Սարսափների և հոգու տանջանքների այս րօպէին, մենք պարտաւոր ենք ասել ձեզ՝

«Արիացէ՛ք. Աստուծու օգնութեամբ մենք կը յաղթենք»։

ՖՕՆ-ԴԵՐ-ԳՕԼՑԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Գերմանացի ֆելդմարշալ ֆօն-դեր-Գօլցը, որին Վիլհէլմը նշանակել է Բէլգիայի իր գրաւած գաւառների նահանգապետ, Գերմանիայում համարվում է պատերազմական հեղինակաւոր գրողներից մէկը։ Եւ ահա թէ ինչ է գրել այդ ֆելդմարշալը մի քանի տարի առաջ «D. R.»-ում Գերմանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև լինելիք պատերազմի հաւանական ելքի մասին։

«Մենք յոյս ունենք, որ, շնորհիւ մեթօդիկ պատրաստութեան, Գերմանեան բաւականաչափ ուժ կունենայ, որ ետ մղի երկու կողմի յարձակումը։ Բայց նա չի լինի այնքան ուժեղ, որ Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ հաշտութիւն կնքի այն պայմաններով, որ ձեռնտու չը լինի նրանց իւրաքանչիւրի համար։ Կասկածելի է, որ նրան աջողվի իր ոյժերի կէսով նուաճել հակառակորդներից մէկին։

«Համենայն դէպս, այդ կարող է աջողվել միայն հսկայական և երկար ջանքերի գնով... բայց այդ մեզ համար հնարաւոր կը լինի միայն այն դէպքում, երբ ծովը մեզ համար բաց մնայ։ Մեր ցամաքային սահմանների երկրագործական և արդիւնաբերական ներմուծումը առանց այն էլ հնարաւոր կը լինի, որ Աւստրիան և գուցէ Իտալիան նաև, մասնակից կը լինեն պատերազմին»։

ԳԱԲ. Դ'ԱՆՈՒՆՑԻՕՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

«Ժուռնալ»-ում տպված է Գաբրիէլ դ'Անունցիօյի մի յօդուածը «Իտալացին իտալացիներին» վերնագրով։ Իտալացի նշանաւոր բանաստեղծը կոչ է անում իր հայրենիքին ակտիւ մասնակցութիւն ցոյց տալ պատերազմին յօգուտ երրեակ համաձայնութեան և ընդդէմ Գերմանիայի։

«Մինչև ե՞րբ,—ասում է նա,—մեծ և միաբան ժողովուրդը պէտք է դանդաղի մի քանի մարդկանց ծերութեան տատանումների պատճառով, որոնք անընդունակ են ընդգրկել այն դրամայի ամբողջ խորութիւնը, որ ներկայ ենք մենք այնքան բարձրացած նախազգացումներով։ Շատ տարիների ընթացքում մեր քաղաքական կեանքը քայքայվում է դաշնակցութեան կեղծիքով, որը հակառակ լինելով մեր բոլոր շահերին և վիրաւորելով մեր բարձր զգացումները, կարծես ընկղմել էր մեզ անելանելի և մըռայլ բարբարոսութեան մէջ։ Այդ զզվելի կեղծիքը, որ բաւականին երկար գոյութիւն ունեցաւ, վերջապէս, ոչնչացվեց։

«Ներկայ պատերազմը միայն ժամանակաւոր և անցողական շահերի հասարակ ընդհարում չէ։ Նա աւելի խորն է, ես կասէի՝ առաւել աստուածային, որովհետև նա պէտք է կանգնեցնի ժամանակի ընթացքը և զարգացումը այն ամենի, ինչ-որ անասնական է մարդու մէջ։ Այս ցեղերի պայքար է, անհաշտ ոյժերի ընդհարում. այս արեան փորձութիւն է, որ վաղուց են լատինական ժողովուրդների թշնամիները համաձայն սրի օրէնքների։ Ի՞նչ էին ասում հին ժամանակ կռւողները իրանց հետ թըշնամի ցեղերին.—«Աստուածները ուղեկցում են յաղթողներին։ Մենք ցանկանում ենք նրանց քաղցը յագեցնել ձեր աճիւններով։ Սրի փայլը լոյսի վերջին ճառագայթն է պարտվածների համար։ Կորչի՜ր! Աստուածները չեն լսում ձեր աղօթքները։ Ձեր քաղաքները, ձեր ոսկին, ձեր երփներանգ զարդարանքը և հագուստը, ձեր իրեղէնները, ձեր փափուկ անկողինները և ձեր կանայք—այդ ամենը մեզ համար են»։

«Իսկ ինչ էին ասում յաղթողները պարտվածներին։

«Դուք—մարդիկ չէք, դուք իրեր էք մեզ պատկանող։ Մենք ձեր աղջիկներից պէտք է պարմաններ չը ծնենք մեր սերը չորացնելու համար. մենք պէտք է նրանց պահենք մինչև այն ժամանակ, երբ մենք նորից տարված լինենք սանձել սարուկների խենթութիւնը, երբ մեր կարած ծառի բունը նոր ճիւղեր արձակի։ Բայց մենք արմատները չը պէտք է թողնենք»։

«Գերմանացիների դաժանութիւնը և ագահութիւնը,—ասում է դ'Անունցիօ,—նախանիկ ժողովուրդների այդ զգացմունքից տարբերվում է միայն իր մեծ ծանրակշռութեամբ։ Դեռ Տացիտը ասել է, որ գերմանացիները կարգապահօրէն կողոպուտներով են զբաղվում։ 1910 թ. գերմանական գրողներից մէկը ասում էր. «Որքան անողոք լինի «vae victis»-ը, այնքան հաստատ կը լինի ապագայ խաղաղութիւնը։ Հնուց պարտված ժողովուրդը ենթարկվում էր կատարեալ ոչնչացման։ Ներկայումս ֆիզիքական ոչնչացումը անհնարին է։ Սակայն կարելի է երևակայել այնպիսի պայմաններ, որոնք գրեթէ հաւասարազօր են ոչնչացման»։

«Գերմանացիները չը լաւած յամառութեամբ ձգտում են դէպի հարաւ, դէպի Ադրիատիկ և Միջերկրական ծովերը,—ասում է դ'Անունցիօ։—Հաբսբուրգների ճակատագիրը, այսպիսով, նախորոշված է Հօհենցօլլերնների բաղձանքների հանդէս գալով։ Վիլհէլմի մտքով, Ադրիատիկի ծովափը Տրիէստի հետ, Պօլի և Դալմացիայի հետ պէտք է գերմանական Reichsland դառնայ և կառավարվի սրածայր սաղաւարտ ունեցող փոխարքայով։

«Այդ դատարկ երազ չէ,—ասում է դ'Անունցիօ։—Ես երկիւղ եմ կրում, որ մենք բաւականաչափ չենք կարող համոզվել իրական վտանգում և այժմ, թարմ սարսափների դիմաց, այն սպանութիւնների դիմաց, որ կատարվում են երեխաների և յղի կանանց վրա. և դիմաց այն հրդեհների, աւերումների և կենդանի ոյժերի և մարդկային փառքի բոլոր յիշատակարանների ոչնչացումների։

«Բարբարոսութեան այս հեղեղը անհրաժեշտ է կանգնեցնել։ Լատինական կուլտուրան նոյնքան անհրաժեշտ է աշխարհի ազնուութիւնը պահպանելու համար, ինչպէս ներքին աւիշը անհրաժեշտ է ամեն մի կենդանի էակի։ Այն ծովի ափերին, ուր յոյները ստեղծել են յաւիտենական գեղեցկութիւն, հռոմայեցիները՝ ճշմարտութիւն, իսկ հրէաները՝ սրբութիւն, անկարելի է սպասել տևտոնի երևալը։

«Իտալիայի նպատակը կայանում է ոչ միայն նրանում, որպէսզի հաբսբուրգեան լծի տակից ազատի լատինական վաղեմի հողերը։ «Անհամեմատ վեհանձն է նպատակը նրա, ում կեանքը ծաղկել է մարդկային կեանքի ազատութեան հետ, և թաղվել է նրա թաղումով», կայանում է նրանում, որ ժողովուրդների հօրդաների վրա տարած յաղթութեան խնդումի րօպէին ծածանվող գեղեցիկ դրօշակներով մտնի կայսրութեան քաղաքը։

«Ամեն մի անցնող օր անհետ կորչում է յաւիտենական փառքի համար»։

ԿԱՐՊԱՏԵԱՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ

(Բժշկի նամակներից)

«Ниж. Лист.»-ը տալիս է Նիժեգօրոդցի մի բժշկի նամակը, թւագրված սեպտ. 16-ից։ Այդ բժիշկը գտնվում է Կարպատեան լեռների մօտ եղած ռուսական գործող զօրաբանակում։

«Սեպտեմբերի 16-ին.

«Ահա հինգ օր է մենք կանգնած ենք նոյն տեղը։ Վաղը կը շարժվենք առաջ։ Եղանակը փոթորկալի է. սաստիկ քամին պոկում է ծառերի տերևները և քշում հեռու-հեռու դէպի դաշտերը։ Մենք նման ենք պոկված տերևների։ Եւ արդեօք մենք երկա՞ր պէտք է պտտվենք, մինչև որ ընկնենք մեր հայրենի տները. դա մեզ աւելի քան քիչ է յայտնի, և դժուար թէ գտնվի մէկը, որ պատասխանի այդ հարցին։

«Քամին սարսափելի ոյժով արմատահան է անում ծառերը և տապալում ճանապարհի վրա։ Այդ ցիկլօնը շարժվում է Սկանդինաւեան ինչ-որ կղզիներից Եւրօպայի վրայով։ Մի օր ևս, և մենք կը լինենք նոր ցիկլօնի բևեռի մօտ։ Լեռները անպայման իրանց ազդեցութիւնն են ցոյց տալիս քամիներին. այսպէս են դատում օդերևութաբանները։

«Ես կարդում եմ լրագիրներ, բայց շատ ուշ-ուշ, սեպտեմբերի 4-ից։ Մերոնցից մէկը Եարօսլաւում կարդացել է «Варш. Курь.»-ի սեպտեմբերի համարը։ Որքան ուրախացանք բա տուած տեղեկութիւններից։

«Դու գրում ես, թէ ուզում ես ինձ համար փափախ ղրկել. Ախր չէ, որ տաք գլխարկ ունեմ, որ դու ես դրել իմ չօրերի մէջ։ Կօկարդը կը կպցնեմ, և վերջացաւ...

«Անցեալ օրը մի սագ առանք 1 ռ. 60 կօպէկով։ Ոչ ոք չի ծախում, «մեզ էլ հարկաւոր է» ասում են։ Մենք էլ, որպէս մարդիկ, տալիս ենք՝ ինչ որ ուզում են։

«Այստեղ միրգ շատ կայ։

«Ազգաբնակութիւնը մրջիւնների նման նստած էր ճեղքուածների մէջ. այժմ փողոցները լիքն են կանանցով, գիւղացիներով և երեխաներով. խոզերին փողոցներով անց են կացնում թոկերով կապած։ Խոզերը ունեն նշաններ. ամեն մէկի ականջին օղ կայ, որոնց վրա գրված է թէ ում խոզն է։ Երեկ ցեխոտ ճանապարհով գնալու միջոցին ես մտածում էի քո անուանակցութեան մասին։ Մնաս բարով։ Ցտեսութիւն»։

ՀԱՅ ՎԻՐԱՒՈՐՆԵՐԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Գ.

Անհետաքրքրական չէ ծանր վիրաւորված կարսեցի Մարկոս Տէր-Կարապետեանի պատմութիւնը, թէ որպիսի պարագաներում վիրաւորվեց ինքը և զրկվեց յաւիտենապէս իր ձախ ոտքից։

Պատերազմի հէնց առաջին օրերից նրանք

խմբված են լինում Լիւբլինից դէպի արևելք։ Նրանց գունդը ոչնչացնում է աւստրիական մի քանի գումարտակ. մնացած աւստրիացիք փախուստի են դիմում. հասնում են կոզակներն ու թնդանօթը՝ պակասը լրացնելու համար... Սակայն հետախուզութիւնը ցոյց է տալիս, որ ռուսական մի դիվիզիայի դէմ դուրս են գալիս 2 կորպուս։ Հրամայվում է ետ նահանջել և սպասել մօտիկ անտառում։ Երեկոյեան դէմ երևում է աւստրիական հեծելազօրը. ռուսները քաշվում են անտառի խորքը. իսկ թնդանօթը պատրաստ սպասում է անկոչ հիւրերին։ Բայց աւստրիացիք, ինչպէս երևում է, հոտն առնում են ու առաջ չեն գալիս։ Հրամայվում է զօրքին խրամատներ պատրաստել, ապա հանգստանալ։ Այդ գիշեր պատահմամբ Մարկոսինն է լինում գիշերապահութեան հերթը. նա 4 ժամվայ անքնութիւնից յետոյ դառնում է իր խրամատը, և տեսնելով որ լաւ չէ փորված, անձամբ սկսում է շտկել. իսկ որովհետև գիշերը ամենևին չէր քնել, քունը տանում՝ քնում է։ Առաւօտեան դէմ զգում է, որ մէկը հրում է իրան, աչքերը բանում, տեսնում է առաջ կանգնած է իր ալէքսանդրոպօլցի «հօրօմ» (յոյն) ընկերը, որը իր լաւ ընկերն է եղել ծառայութեան ընթացքում և որին մինչև անգամ «հայերէն է սովորեցրել» Մարկոսը։

— Մարկոս,—ասում է յոյնը,—գնանք մի առու գտնենք մօտակայքում, մի կուշտ ջուր խմենք. շատ եմ ծարաւել։

Որովհետև Մարկոսը ինքը սաղ գիշերը ջուր չէր խմել, համաձայնվում է ուրախութեամբ։ Բանակից հեռանում են 2 վերստաչափ, մի սառնորակ աղբիւր գտնում մի կուժ ջուր խմում և գլուցելով վերադառնում։ Խօսքի բռնվելով մոլորվում են և ճանապարհը կորցնում։ Յանկարծ մի տրաքոց... Արիւնը շատրուանի նման ցայտում է Մարկոսի ձախ ոտքի երկու կողմից։ Աւստրիական երկու զինուորի են հանդիպում անսպասելիօրէն, որոնք դարան մտած յարձակւում են գործում յանկարծակի և վիրաւորում Մարկոսին։ Վերջինիս գլուխը պտտվում-ընկնում է, իսկ յոյնը սկսում է փախչել։ Մարկոսը յուսահատված ձայն է տալիս. «Թօդօր (այնպէս էր յոյնի անունը), ո՞ւր է քո ընկերութիւնը, ո՞ւր ես փախչում, ինչու ես մեն-մենակ թողնում ինձ, անօգնական այս ամայի դաշտում. ո՞ւր էր խօսքդ, թէ կը մեռնեմ, Մարկոս, քեզ մենակ չեմ թողնի»։

Վիրաւորի աղերսը ազդում է ընկերոջ վրա. նա ետ է դառնում և սկսում կրակել աւստրիացոց վրա. մէկին վիրաւորում է, իսկ միւսին փախցնում. շալակում է ընկերոջը և 5 վերստ ոտքով բերում մի լեհական գիւղ. իսկ այստեղից սայլով դէպի Լիւբլին։ Այստեղ կապում են վէրքը. յետագայ ճանապարհորդութեանց ժամանակ վէրքը անխնամ է մնում, կեղտոտվում ու սկսվում է գանգրենա հիւանդութիւնը, բերում են Մօսկվա, և բժիշկները տեսնում են, որ հիւանդի կեանքը ազատելու միակ միջոցը մնացել է ոտքը կտրել։

Սակայն բարեբաղդաբար վէրքը լաւանում է հետզհետէ. երկրորդ այցելութեանս ժամանակ տրամադրութիւնն աւելի լաւ էր, անյագ ցանկութիւն ունէր խօսելու, «իր գլխով անցածը» պատմելու։ Բարեբաղդաբար իմ գնալուց առաջ 2 ուսանող մտան, որ շատ ուրախացրին թէ նրան և թէ միւս ընկեր վիրաւոր հային. «Էս ինչու մեզ մոռացել էք, տղէք,—ժպտալով յանդիմանեց Մարկոսը.—էս հեռու երկրում երկուսով ահա մի ամիս է այստեղ պառկած ենք, տխուր-տրտում անցնում են մեր օրերը, բժիշկը կասէ ինչի թուղթ չէք խաղայ, գոնէ թըղթով զբաղվեցէք, բայց դրան էլ մանկութիւնից սովոր չենք։ Երկուսով զրուցում ենք, խօսում և զարմանում, թէ էս մենք վիրաւոր ընկած ենք, Մօսկվայում այսչափ հայեր ինչու մեզ չեն յիշում։ Չէ՞ որ՝ եթէ ուրախ լինենք, մեր վէրքն էլ շուտ կը սաղանայ. որ տխուր լինենք, վէրքն էլ ուշ կը սաղանայ»։

Եւ իսկապէս՝ Մարկոսը և դրան նմանները արժանի են հոգատար ուշադրութեան. դրանք իրանց անարատ հոգով, հեզահամբոյր դէմքով հայ մաքուր գիւղացու տիպար են ներկայացնում։

Այժմ կարող եմ ուրախութեամբ արձանագրել, որ հայ վիրաւորներին յաճախ այցելելը, նրանց պէտքերը հոգալը, հայ լրագիր և գիրք հասցնելը դրված է լաւ հողի վրա. մի խումբ հայ օրիորդ-տիկիններ իրանց վրա են առել այդ համակրելի գործը։

Չը մոռանամ յիշել, որ ընդհանրապէս բոլոր վիրաւորներն էլ գանգատվում են, թէ իրանց ծնողներից և ազգականներից կամ ուշ են նամակ ստանում կամ ամենևին, որով աւելի ծանրանում է հարկաւ նրանց առողջական դրութիւնը։

Ահա վիրաւորների նոր ցուցակը.

Վարոս Օգանէսեան՝ վիրաւորված ձախ ձեռքից գերմանական սահմանում. Արմենակ Կամիլաւրեան՝ վիրաւ. փորից. Սարգար Այվազեան՝ ձախ ձեռքից. Սահակ Մանուկեան՝ աչքերը հաւկուր, Մարտիրոս Պետրոսեան՝ ձախ ձեռքից, Արշակ Տէր-Յարութիւնեան՝ պօդպրապօրշչիկ, վիրաւ. Լիւբլինի մօտ օգոստոսի 18-ին. Տիգրան Փիրումեան՝ պօրուչիկ, Ինստենբուրգի մօտ օգոստ. 29-ին ձախ ոտքից, շուշեցի է. Ստեփան Ստեփանեան օրդուբաթցի, պատկերահան. սպանվել է Գումբինենի մօտ օգոստոսի 7-ին և թաղվել հայ ընկերների ձեռքով. Երանոս Յովհաննիսեան, Հին-Նախիջևանի Նորսեցի, Լիւբլինի մօտ, ձախ թևից, թեթև. Մովսէս Բաղալեան, նոր-բայազէտցի, Շահրիզա գիւղից. օգոստ. 4-ի առաւ. ժամը 10-ին սպանվել է գերմ. սահմանում։ Հմայեակ Զաքարեան՝ վաքաթալցի, յուլիսի 22-ին սպանվել է Վերժբօլօվի մօտ. Յարութիւն Քոչարեան՝ Տիգօրից, աջ թևից, Լիւբլինոյի մօտ. Մկրտիչ Սիմէօնեան՝ Խակից, ախալցխացի, ձախ ձեռքից վիրաւ. աւստր. սահմանում. Միսակ Մարգարեան՝ ճալեցի (Կարս), ձախ ձեռքից, աւստր. սահմանում։

Արսէն ք. Սիմէօնեան

(Կը շարունակվի)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

11—13 հոկտեմբերի

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ. — Վախճանվեց դանիական յայտնի գրող Գուստավ Վիդը։

ՄԱԴՐԻԴ.—Թագուհին տղայ ծնեց։

ԹԷՀՐԱՆ.—Կառավարութիւնը, ամեն տեղից տեղեկութիւն ստանալով թէ Սալար-ուդ-Դովլէն երևացել է Թիւրքաց սահմանում, խիստ անհանգստացաւ և դիմեց ռուսաց միսսիային՝ խնդրելով տեղեկանալ ճըշդօրէն պրինցի որտեղ գտնվելու տեղը։

Թիւրքաց դեսպանը շարունակում է հաւաստիացնել, թէ Թիւրքիան ագրեսիվ մտադրութիւններ չունի, և իբրև ապացոյց բերում է այն, որ Թիւրք-պարսկական սահմանաչափ յանձնաժողովում նշանակվել է նոր կօմիսար և հրամայված է յանձնաժողովին շարունակել աշխատանքները։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Սենատն անհետևանք թողեց «Совр. Міръ» թերթի խմբագիր Կրանցֆէլդի վճռաբեկ բողոքագիրը, որին պալատը դատապարտել է 8 ամսով բանտի «Սանին» վէպը տպագրելու համար։

ՍՕՖԻԱ.—Բուլղարական գործակալութիւնը հաղորդում է. «Աւստրիական «Բրախս» նաւը ռումինական ափի մօտով անցնելիս կրակ բացեց ռումինական պահակախմբի վրա»։

ՍԿՕՊԼԷ.—Հոկտեմբերի 5-ին Կրատովի շրջանի Շօպսկո Նուգարի գիւղում ընդհարում տեղի ունեցաւ Կիւստենդիլում կազմակերպված 20 հոգուց բաղկացած հրոսակախմբի և սերբիական զինուորախմբի միջև։ Հրոսակախումբը մտադիր էր փչացնել երկաթուղագիծը։ Սպանված հայդուկների մօտ գտնվեց մի քանի կիլօգրամ պայթուցիկ նիւթ։ Հոկտեմբերի 7-ին Օրգանժիլի գիւղում ընդհարում եղաւ Թիւրքաց մի հրոսակախմբի և սերբիական սահմանապահ զինուորների միջև։ Հրոսակախումբը փախաւ, անցնելով կրկին բուլղարական երկիրը։

ԿԻԵՎ.—Թաղական ոստիկանատնից բերդի շտաբը տանելու ժամանակ քաղաքապահ ոստիկանի ձեռքով սպանվեց Բէյլիսի գործում մասնակցած Վէրա Չեբերեակի եղբայր Սինգաևսկին՝ փախչելու փորձի համար։ Սինգաևսկին իբրև պահեստի զինուոր պասալիք էր եղել։

ՍՕՖԻԱ.—Սանիտարական գերագոյն խորհրդի կարգադրութեամբ Աւստրո-Ունգարիան յայտարարված է խոլերայից անբարեյաջող։ Աւստրո-Ունգարիայից Բուլգարիա մտնողները պէտք է ենթարկվեն բժշկական քննութեան։ Միաժամանակ արգելվում է ներմուծել տնային իրեր, միրգ ու կենսական մթերքներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

—

Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։

Գերապատիւ առաջնորդաց թեմօրէից հայոց Ռուսաստանի, բարեջան խորհրդոց և հոգաբարձութեանց հայոց Պետրօգրադի, Մօսկվայի, Նորոյ-Նախիջևանի, Աստրախանի, Արմաւրի, Եկատերինոդարի, Վլադիկավկազի, Բագուի, Շուշւոյ, Տփխեաց, Երևանայ, Ալէքսանդրօպօլի, Կարուց և ամենայն հայաբնակ քաղաքաց և ուանից Կովկասու և Անդրկասպեան երկրին, Բարեգործական Ընկերութեան Հայոց Կովկասու, Մարդասիրական Ընկերութեան յանուն ս. Գրիգորի Լուսաւորչի և Կուլտուրական Միութեան Հայոց Բագուի, Բարեգործական Ընկերութեան և Եկեղեցական Հոգաբարձութեան հայոց Նորոյ-Նախիջևանի և ամենայն անդամոց աստուածահաճոյ ընկերութեանց, միութեանց և յանձնաժողովոց հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ս. Էջմիածնի ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։

Հայրապետական Կոնդակաւ Մերով 5-ն օգոստոսի տարւոյս յորդոր կարդացաք առ ամենայն հոգևոր որդիս Մեր, բնակեալս ընդ հովանեաւ Մեծազօր Պետութեան Ռուսիոյ և կոչեցաք զամենեսին փութով օգնել նիւթապէս և բարոյապէս նախ՝ վասն յաջողութեան և յաղթութեան զօրաց Ռուսիոյ ի մեծի պատերազմին, երկրորդ՝ վասն կազմակերպելոյ զմարդասիրական գործ օգնութեան և շուտափոյթ բժշկութեան վիրաւոր զինուորականաց, որք զանձինս իւրեանց եդին վասն պատուոյ և փառաց ընդհանուր հայրենեաց և երրորդ՝ վասն սփոփելոյ և խնամելոյ զպատուական և զանօգնական ընտանիս զինուորաց։

Այժմ մեծաւ մխիթարութեամբ հոգւոյ տեսանեմք, զի հայ հասարակութիւնք մայրաքաղաքաց Պետրօգրադի և Մօսկվայի, Նոր-Նախիջևանի, Բագուի, Տփխեաց և այլ հայաբնակ քաղաքաց, որպէս և Բարեգործական Ընկերութիւն Հայոց Կովկասու, Մարդասիրական Ընկերութիւն և Կուլտուրական Միութիւն Հայոց Բագու քաղաքի և այլ աստուածահաճոյ ընկերութիւնք, միութիւնք և յանձնաժողովք արանց և կանանց՝ ամենայն անկեղծութեամբ և ազնիւ եռանդեամբ ջանան կատարել զպարտական և զսրբազան պարտս իւրեանց առ քաջարի և անձնազոհ եղբարս և առ ընդհանուր հայրենիս, բանալով զհիւանդանոցս, կազմակերպելով զգործ առողջապահական խնամոց և եղբայրական օգնութեան։

Սակայն յայտնի է ձեզ, սիրելի որդեակք հոգևորք, եթէ որքան մեծ են և բազմապիսիք՝ կարիք և պահանջք ժամանակիս և որչափ ծանր և երկարատև՝ անմիջական հետևանք սոսկալի պատերազմին։ Զայս բարդ և զպատասխանատու հանգամանս առաջի աչաց ունելով, անհրաժեշտ է վասն կատարեալ յաջողութեան՝ ընդ փոյթ ընդարձակել զմարդասիրական գործունէութիւնն և շաղկապել ընդհանուր ծրագրաւ և միաբան գործունէութեամբ զամենայն ձեռնարկութիւնս հայ ժողովրդեան, որք ուղղեալ կան ի թեթևացումն աղէտից և արհաւրաց ահարկու պատերազմին։

Առ այս գոհ եմք, զի նախաձեռնութեամբ Բարեգործական Ընկերութեան Հայոց Կովկասու ի 14-ն ամսոյս գումարեցաւ համաժողով ի պատգամաւորաց բարեգործական և այլ աստուածահաճոյ և ազգային հաստատութեանց մերոց ի Տփխիս քաղաքի վասն միաւորելոյ և ընդարձակելոյ զգործունէութիւն հայ ժողովրդեան՝ ի բժշկութիւն և ի հոգևոր սփոփումն վիրաւորեալ զինուորականաց և յօգնութիւն տառապեալ ընտանեաց նոցա։ Համաժողովն այն ի 16-ն ամսոյս ի ձեռն նախագահի և ատենապետի իւրոյ զեկոյց Մեզ հեռագրաւ զորոշումն և զեզրակացութիւն և ապա մատոյց Մեզ զմանրամասն արձանագրութիւն իւր և խնդրեաց առնուլ զգործունէութիւն և զբարենպատակ ձեռնարկութիւնս ընդ հովանաւորութեամբ Մերով։

Արդ՝ Մեք՝ Ծայրագոյն Պատրիարք-Կաթուղիկոս Ամենայն Հայոց և Պետ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, տեսեալ զսոսկալի աղէտս, զարհաւիրս, հասեալս յերեսաց թշնամեաց, և կատարելապէս յարգելով զորոշումն և զխնդիր համաժողովոյն և առնելով ընդ հովանաւորութեամբ Մերով զմարդասիրական գործունէութիւնս հայ ժողովրդեան, այսու Հայրապետական Կոնդակաւս յիշեցուցանեմք ձեզ և ամենայն հոգևոր սիրելի որդւոց Մերոց զհամապետական և զազգային պարտս և յորդորեմք զամենեսին ընդ փոյթ հասանել յօգնութիւն վասն կազմակերպելոյ և իրագործելոյ զպահանջս ժամանակիս և զվերոյիշեալ մեծ և զմարդասէր նպատակ։

Որդեակք հոգևորք, յայսմ պատմական նշանակալից վայրկենի ազգն հայոց միախորհուրդ և միակամ լեալ՝ պարտ է ցուցանել զբարոյական կորով մեծ, զգիտակցական լուրջ վերաբերմունս և զազգային պատմական արժանիս իւր ամենայն անձնազոհութեամբ։

Ուղղելով զբանս Մեր առ մաքուր զգացմունս և առ հեռատես խոհականութիւն հոգևոր որդւոց Մերոց, յորդորեմք թողուլ զամենայն խմբակցական հաշիւս և հեռացուցանել իսպառ զներքին տարաձայնութիւնս և շաղկապեալ ընդ միմեանս հայրենասիրական և մարդասիրական վեհ զգացմամբք, գործել ի միասին՝ հաւատով, յուսով և սիրով։

Հաւատամք և համոզեալ կամք, զի յաղթութեամբ և նախաձեռնութեամբ մեծազօր պետութեան Ռուսիոյ և զինակից պետութեանց իւրոց, փութով դադարեսցին քաղաքական փոթորիկք և թագաւորեսցէ մըշտատև խաղաղութիւն, արդարութիւն և ցանկալի իրաւակարգ։ Յայնժամ նաև ազգն հայոց վերածնեալ՝ ազատաբար վայելեսցէ զբարիս քաղաքակրթութեան, յաւէտ երախտագիտութեամբ և օրհնութեամբ յիշելով զվերահաստատողս արդարութեան և իրաւանց ազգաց։

Աղօթեմք առ Աստուած վասն յաղթութեան, խաղաղութեան և երջանկութեան մեծազօր պետութեան Ռուսիոյ։

Աղօթեմք նոյնպէս վասն բարօրութեան և խաղաղ քաղաքակրթութեան ազգիս հայոց։

Եւ դուք աղօթեցէք, որդեակք հոգևորք, և գործեցէք համապազ ամենայն եռանդեամբ և անձնուիրութեամբ։

Օրհնելով զձեզ զամենեսին, զբարի նպատակս և զօգտաւէտ գործունէութիւնս ձեր, մաղթեմք ի Տեառնէ պարգևել ձեռնարկութեանց ձերոց յաջողութիւն կատարեալ։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ, Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 28 սեպտեմբերի 1914 ամի.
ըստ տումարիս ՌՅԿԳ
ի Հայրապետութեան Մերում Գ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ
Թ. 1511—1523.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷՏԻ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, հոկտ. 12-ին, կայացաւ պատերազմից աղէտեալներին օգնող հայկական կենտրոնական կօմիտէտի երկրորդ ժողովը։

Ժողովում կարդացվեց պատուաւոր հովանաւորող Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.-ի կոնդակը, որ օրհնում և քաջալերում է կօմիտէտին՝ աւելի ընդարձակել իր գործունէութիւնը՝ յօգուտ հայրենիքի համար վիրաւորված հերոսների և նրանց ընտանիքների։

Կօմիտէտը, ի միջի այլոց, որոշեց մի առանձին կոչով դիմել հայկական բոլոր հիմնարկութիւններին և ընկերութիւններին՝ յանձնարարելով կազմել տեղական կօմիտէներ և ձեռնարկել եռանդուն գործունէութեան։ Ի վերջոյ որոշվեց կազմակերպել միաժամանակ գանձանակի հասոյթ Թիֆլիսում և դիմել բոլոր հայ ընտանիքներին, որպէսզի իւրաքանչիւր ընտանիք կամ անհատ ամեն ամիս յատկացնէ իր մի օրվայ ծախքը՝ հիւանդանոցին իբրև նըպաստ, որ կոչվի «Նահատակների լումայ»։ Երևանի և Կարսի նահանգներում պահեստիների ընտանիքները շուտափոյթ ռեգիստրացիայի ենթարկելու համար, կօմիտէտը որոշեց այնտեղ ուղարկել փորձառու և ինտելիգենտ մի անձնաւորութիւն և լիազօրել նրան, որ կազմակերպէ տեղական գիտակից ոյժերից գործին նպաստող ինտելիգենտ ոյժեր։

Կ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Կիրակի օրը Ժողովրդական Տանը կայացաւ Թիֆլիսի Ժողովրդական Համալսարանի Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը 55 անդամի ներկայութեամբ։ Ժողովի նախագահ ընտրվեց բժ. Ե. Մինասեան, իսկ քարտուղար՝ Վ. Ահարոնեան։ Ժողովը վարչութեան փոխ-նախագահ բժ. Կիկալէյշվիլիի արած համառօտ զեկուցումից ծանօթանալով վարչութեան ունեցած գործունէութեան հետ՝ անցաւ վարչութեան կազմի լրացուցիչ և վերահսկիչ մասնաժողովի 5-ական անդամների ընտրութեան։ Վարչութեան անդամներ ընտրվեցին. 1) պրօֆ. Դուբրօվսկի, 2) Մարիա Րօկլինա, 3) Ս. Խանոյեան, 4) Ջափարիձէ և 5) Շարաֆեան։ Իսկ վերահսկիչ մասնաժողովի անդամներ ընտրվեցին. 1) Ն. Քարցիվաձէ, 2) Բ. Ամիրաղով, 3) Ա. Մկրտումեան, 4) Բ. Սահակեան, 5) Վ. Ահարոնեան։

Ինչ վերաբերում է ժողովականներից մի քանիսի այն հարցին, թէ ինչու վարչութիւնը աւելի մանրամասն հաշիւ չէ ներկայացրել, դրան որպէս պատասխան այս վերջինը յայտնեց, թէ ընդհանրապէս Ընկերութեան գործերի դրութեան և ունեցած գործունէութեան տպագրված մանրամասն հաշիւը վարչութիւնը կը ներկայացնէ տարվայ վերջին, իսկ այսօրվայ ժողովը գումարված է ընտրութիւններ կատարելու յատուկ նպատակով։

Այժմս վերակազմված վարչութեան օրակարգի խնդիրների առաջին շարքում դըրված է լինելու այն հարցը, թէ ինչ աղբիւրներից փող գտնի, որպէսզի կարելի լինի վերաբանալ գրագիտական երեկոյեան դասընթացքները, որի պահանջը այնքան զգալի է Թիֆլիսի աշխատաւոր և բանւոր դասակարգի մէջ։

Բ. Մ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՄԱՍԻՆ

—

Դպրոցական ֆոնդը և նրա հետ կապված ծխական դպրոցների ապահովութեան խընդիրը շատ յոյսեր և ակնկալութիւններ առաջացրին հայերիս մէջ. մենք կարծեցինք, թէ այդ ֆոնդի կազմակերպումով միանգամայն ապահովում ենք ծխ. տարրական դըպրոցները, բայց պատերազմը մոռացնել տուեց։ Այսօր հետաքրքրական է տեսնել, թէ ինչ է արված, մանաւանդ որ ահա բոլորում է մի տարի, ինչ վերջացել է համազգային յոբելեանը և փակված է դրամի հանգանակութիւնը։

1912 թ. հոկտ. 12-ից մինչև 1913 թ. հոկտ. 13-ը տևող համազգային յոբելեանը հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի առիթով ունեցաւ այն գործնական արդիւնը, որ Վեհափառ կամքով հիմք դրվեց Դպրոցական ֆոնդին, Էջմիածնի սինօդին կից։ Սկզբում «Մեսրոպեան լումայ» անուան տակ եղան նուիրաբերութիւններ, և անցեալ տարի այս ժամանակ մենք կարծում էինք, թէ կը ժողովվի առնուազն միլիոն ռուբլի, որի տոկոսներով և պահվելու են ծխ. դըպրոցները. բայց Մայր Աթոռի պաշտօնական «Արարատ» ամսագրի սեպտ. համարում կարդում ենք, որ ընդամենը ժողոված է 176,963 ր. 18 կ., մի չնչին գումար, որ բոլորովին պատիւ չէ բերում անցեալ տարվայ մեծախօսներին։

Անցաւ մի ամբողջ տարի, ինչ փակված է հանգանակութիւնը, և այս տարի մենք նորից կը գնանք Օշական, այցելելու ս. Մեսրոպի շիրիմին. մինչ այս անգամ էլ պէտք է կերակրվենք առատ տեղացող բարի ցանկութիւններով, ծրագիրներով և ուղերձներով։ Իրական գործ պէտք էր։ Դպրոցական ֆոնդի կազմակերպմանը և գործադրըմանը պէտք էր դիմել. բայց, որքան գիտենք, այդ ուղղութեամբ ոչինչ չէ արված. միայն Վեհափառ Կաթողիկոսը կարգադրել է, որ դպրոցական ֆոնդին յատկացված գումարի տոկոսներից միանուագ նպաստ տրվի 500 ր. Զխարի դպրոցին. այսպիսով կարծես կազմակերպված է և սկսում են գործադրել. սա առաջին դէպքն է, երբ որևէ նպատակի համար գործ են դնում դպրոցական ֆոնդի գումարները։

«Մշակի» անցեալ տարվայ № 266-ում «Դպրոցական ֆոնդի գործադրումը» յօդուածում պարզել եմ իմ ծրագիրը, չեմ ուզում կրկնել. միայն ցանկացայ յիշեցնել, որ չէ կարելի երեսն ի վայր թողնել ազգային կուլտուրական գործերը, չէ կարելի շուտ մոռանալ և վտանգի ժամանակ անտես անել բարիքը։

Գ. Տէր-Թուրինեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մեր դպրոցները

Գօրիս, 6 հոկտ.

Չը նայելով ժամանակի լարված դրութեան, տարվայ բերքի պակասութեան, ուրախութեամբ կարող ենք արձանագրել, որ հայ գիւղացին զուրկ չէ կրթական հաստատութիւնից, դպրոցից։

Զանգեզուրի նկատմամբ վստահութեամբ կարող ենք նկատել, որ ներկայումս համարեա թէ բոլոր դպրոցները բացված, ուսումը շարունակվում է ու անցեալ տարվայ համեմատութեամբ նորաբաց դպրոցներ էլ կան։

Եղանակն ամպամած և անձրևային է, որը նպաստեց աշնանացանին։ Տեղ-տեղ կանաչել են ցանքսերը գեղեցիկ կերպով։ Մթերքները զգալի կերպով այնքան էլ չեն թանգացել։ Ցորենի պուդը 1 ր. 60 կ.—1 ր. 70 կ. է ամենամաքուր տեսակը, և յոյս ունենք, որ աշնանասերմից յետոյ կիջնէ 1 ր. 50 կ. և մինչև իսկ 1 ր. 40 կ.։

Հիւանդութիւններ չը կան։ Գաւառիս դպրոցների շարքին այս աշնանից աւելացաւ նաև Գօրիսի քաղաքային քառամեայ նոր տիպի երկսեռ դպրոցը։

Ս—եան

ՂԱՐԱԲԱՂԻ ԼՐԱԲԵՐ

—

Խանքենդ, 5 հոկտեմբերի

Ինչպէս գրել էի, այս տարի Ղարաբաղի տնտեսական բերքը՝ շնորհիւ երկար երաշտի և անընդհատ տեղացող ամառվայ անձրևների՝ սպասված արդիւնքը չը տուեց։ Այժմ Խաչէնի գաւառի շատ գիւղերում գիւղացիք հազիւ մէկ ամսվայ հացի պաշար ունենան. այժմվանից արդէն սկսել են շուկայից ցորեն և ալիւր առնել։

Եւ տարվայ անաջող բերքը կարծես բաւական չէ մեր տարաբաղդ գեղջուկի համար, ահա Վարանդայում և Ջիւանշիրում երևացել են դաշտային մկներ, որոնք սպառնում են անդարմանելի աւերածութիւն գործել այդ երկու գաւառամասերի գիւղօրայքում։

Ի՞նչ յոյսով պէտք է այդ գիւղերում վար անեն ու սերմ ցանեն, քանի որ հողն ընկած հացահատիկն ոչնչացնելու են մկները։

Այո, այս մի սոսկալի աղէտ է մեր գեղջուկի համար, որը անզօր է որևէ միջոցով դիմադրելու և աղէտը վերացնելու։

Եւ այսօր, քանի դեռ ուշ չէ, մեր յարգելի մասնագէտ-ագրօնօմների վրա մեծ պարտականութիւն կայ՝ ժամանակին նորագոյն մեթօդով յիշեալ գաւառամասերում դաշտային մկների արշաւանքի առաջն առնել, լինի այդ անմիջական ցուցմունքով կամ այլ որևէ կերպով։

Եւ այդ, կրկնում ենք, հարկաւոր է հէնց այժմվանից, որովհետև գիւղերում այս երկու օրվայ տեղացող անձրևից յետոյ սկսելու են վար անել։

Մի ուրիշ կարևոր հանգամանք ևս պէտք է ուշադրութեան առնել։ Այդ այն է, որ մեր գիւղերում ներկայ քաղաքական դէպքերի առիթով աշխատող ձեռքը սակաւ է և եղածն էլ՝ իւրաքանչիւրը իր համար է միայն աշխատում։ Եւ քանի որ փոխադարձ օգնութեան գաղափարը մարմնացած չէ մեր գիւղացիների մէջ, անհրաժեշտ է գոնէ օրինական ճանապարհով հարկադրել այս վար ու ցանքի ժամանակ աշխատող ձեռք չունեցողի վարը եւ՛ անել համայնական ոյժով։ Դրա համար կառավարութիւնը պէտք է հոգ տանէ։

Եւ այդ գործում մեծ դեր կարող են խաղալ գիւղական տանուտէրերը, դրդված հասարակութեանը ծառայելու զգացմունքից և հասարակութեան կարիքներին ընդառաջ գնալու պարտականութեան գիտակցութիւնից։

Ա. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Հանգուցեալ Ալէքսանդր Քալանթարի մահարձանի բացումը, նրա թաղման տարելիցի առիթով, նշանակված է եկող կիրակի, հոկտ. 26-ին։ Մահարձանի պրօէկտը կազմել է մեր աշխատակից նկարիչ Գէորգ Բաշինջաղեանը և ունի սիմվօլիկ բովանդակութիւն։

◆ Առաջիկայ ուրբաթ, ամսիս 17-ին, կը կայանայ Գրական-Գեղարուեստական Սալօնի IX տարեշրջանի բացումը։ Սալօնի տնօրէն Տ. Նազարեանն այդ երեկոյ զրուցելու է Եւրոպայում ու Աֆրիկայում կատարած իր 5-ամսեայ ճանապարհորդութիւնների շուրջը, որոնք հարուստ են տպաւորութիւններով։ Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Տ. Նազարեան դեռ մայիս ամսին այցելեց Լայպցիգի համաշխարհային տպագրական գործերի ցուցահանդէսը, որտեղից ապա նա անցել է Դանիա, Շվէդիա, Հոլլանդիա, Անգլիա, Բէլգիա, Ֆրանսիա, Շվէյցարիա, ուր Վէյսէնբուրգի սանատօրիայում մի ամիս կազդուրվելուց յետոյ՝ դարձեալ Ֆրանսիայի վրայով (Մարսէյլից) ծովային ճանապարհով անցել է Յունաստան, Մալտա կղզին, Իտալիա, Բօլգարիա, Թիւրքիա, որտեղից Օդեսսայի վրայով դարձել է հայրենիք։

◆ Ռուս-գերմանական պատերազմի դաշտում վիրաւորված և վէրքից վախճանված հայերի թւում գտնվում է և Գայեանեան դպրոցի նկարչութեան ուսուցիչ Սիմէօն Արղութեանը։ Արդեօք Գայեանեան դպրոցի տեսուչը և ուսուցչական խումբը բարոյական պարտք չեն համարում գէթ հոգեհանգստով յարգել իրանց երիտասարդ ընկերակցի յիշատակը։

◆ Թիֆլիսի մօլօկանների կանայք մի խնդրագիր են ներկայացրել նահանգապետին, որի մէջ ասում են, որ իրանք չափազանց ուրախ են օղեվաճառանոցների ու գինետների փակելու կարգադրութիւնից, որովհետև իրանց ամուսիններն այդ ժամանակի ընթացքում տուն էին գալիս խելքը գլխին և կանօնաւոր կեանք էին վարում, բայց, դժբաղդաբար, պէտք է յայտնել, որ վերջին ժամանակներս նրանք (ամուսինները) սկսել են նորից խմել։ Եւ մօլօկան կանայք իրանց խնդրագրում անուն-անուն յիշում են, թէ ինչ խանութներում են խմում իրանց ամուսինները։

◆ Քաղաքային դումայի իրաւասուների մի խումբ (11 հոգի) քաղաքագլխին մի յայտարարութիւն է ներկայացրել գինու առևտուրը արգելելու առիթով։ Իրաւասուները իրանց յայտարարութեան մէջ անհրաժեշտ են համարում, ի նկատի ունենալով երկրի և քաղաքի բարօրութեան շահերը, միջնորդութիւն յարուցել պարտադիր որոշումները քննելու մասին, որոնք արգելում են գինու վաճառումը։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը որոշել է ունենալ եկեղեցում քառաձայն երկսեռ օրինակելի խումբ երաժշտագէտ Գրիգոր Միրզայեանի ղեկավարութեամբ։ Այն երաժշտասէրները, որոնք կը ցանկանային մասնակցել այդ խմբին, հրաւիրվում են դիմել եկեղեցու միաբան Յովս. քահ. Տէր-Պետրոսեանին, որին յանձնված է գործի կազմակերպութիւնը։ Խմբի անդամների թիւը սահմանափակ չէ»։

◆ Շաբաթ, հոկտ. 11-ին, կանանց բարձր կուրսերի դահլիճում կայացաւ Հասարակական կլուբի ներկայ սէզօնի բացումը։ Երեկոյթը նուիրված է Լերմօնտօվի ծննդեան 100-ամեակին։ Երկու դասախօսութիւններից յետոյ տեղի ունեցաւ համերգ և արտասանվեցին կտորներ Լերմօնտօվի բանաստեղծութիւններից։

◆ Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը թոյլատրել է բժիշկ Պոխվերաշվիլիին ռուս-վրացական հոգևոր համերգ կազմել Թիֆլիսում։ Համերգին մասնակցելու են 200 երգիչ։

◆ Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը քաղ. կենտ. կօմիտէտին է յանձնել 180 ր., որ գոյացել է լօտօյից և թըղթախաղից, սեպտեմբերի 19-ից սկսած մինչև հոկտեմբերի 1-ը։

◆ Իս. Կ. Վարդանեանց Նորին Կ. Մ. Թագուհու Կայսրուհու տեղական պահեստին նուիրաբերել է 300 րուբլի։

◆ Կիրակի, հոկտ. 12-ին, Թիֆլիսի այգեգործական դպրոցին կից բացվեցին միրգ և այգեգործական ու բանջարաբուծական զանազան մթերքներ չորացնելու դասընթացքներ։ Դասընթացքները յաճախելու համար առ այժմ գրվել են 60 հոգի, որոնց կէս մասը կին է։

◆ Հալաբարի ակումբը փոխադրվել է իր ձմերային շէնքը։

◆ Ներկայումս Թիֆլիսում է գտնվում Պետական Դումայի անդամ Մովսէս Աջէմեան։

◆ Ն. Բօզարջեանի առևտրական տունը քաղ. կենտ. կօմիտէտին նուիրաբերել է 150,000 պապիրօս և 2 արկղ ծխախոտ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Քութայիսի նահ. Սազարեջօ գիւղի բնակիչ Իվան Մակարաշվիլի յայտնեց ոստիկանութեան, որ հոկտ. 9-ին Թիֆլիսի գանձատանը իր գրպանից անյայտ մէկը հանել է 275 րուբլի։

◆ Ղազախի գաւառի բնակիչ Սարգիս Մովսէսեան Ջիլինկարեանը յայտնեց ոստիկանութեան, որ իր բնակարանից յարմարեցրած բանալիի միջոցով անյայտ չարագործներ գողացել են 140 րուբլի արժեցող հագուստեղէն։ Կասկածով ձերբակալված է Գօրիի գաւառի բնակիչ Պաւէլ Խօբեխաշվիլի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ Թիֆլիսում հիմնվել է «Անկարա» անունով մի նոր գիւղատնտեսական ընկերութիւն, որի նպատակն է ձեռք բերել ազատ հողեր և այդ հողերի վրա մասնագէտների ղեկավարութեամբ զարգացնել գիւղատնտեսական զանազան ճիւղեր իր անդամների նիւթական և հոգեկան պահանջներին բաւարարութիւն տալու յատուկ նպատակով։ Անդամ կարող են գրվել թէ քաղաքացիներ և թէ գիւղացիներ, վճարելով տարեկան 20 րուբլի։ Ձեռք բերված հողերի վրա ընկերութեան անդամները կունենան թէ ագարակներ և թէ գիւղատնտեսութեամբ պարապելու սեփական հողամասեր։ Վճարի վերջնական սահմանը որոշում է ընկ. ընդհանուր ժողովը։ Վարչութեան անդամներ են ընտրված Գ. Թօփձէ, Բերիձէ, Ռօստոմաշվիլի, Մ. Թօփձէ և Ն. Շուբլաձէ։ Ընկերութիւնն արդէն ունի 56 անդամ։

◆ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլուխ իշխ. Աբխազիի նախագահութեամբ վրաց կուլտուրական զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներից կազմված ժողովը ընտրել է 29 հոգուց բաղկացած մի կօմիտէտ, որը պէտք է նըւիրաբերութիւններ ընդունի վրաց թատրօնի շինութեան օգտին։ Որպէս օրէնսդրական հիմնարկութեան անդամներ՝ կօմիտէտի մէջ մտնում են Պետական Խորհրդի անդամ իշխ. Երիսթավի և Պետական Դումայի անդամներ Գէլօվանի, Ջաբէիձէ և Ջխէնկէլի։ Կօմիտէտի պատուաւոր նախագահներ են ընտրված բանաստեղծ Ա. Ծերեթէլի և իշխ. Սումբաթաշվիլի (Իւժին)։

◆ «Սախալխօ Գազէթի» լրագրի խմբագիր Ն. Կուրդղելաշվիլին իր լրագրում տըպած երկու յօդուածների համար դատի էր ենթարկված 1034-րդ յօդուածով։ Նահանգական դատարանը հոկտ. 9-ին մեղաւոր ճանաչելով Կուրդղելաշվիլիին՝ ենթարկեց նրան 50 ր. տուգանքի կամ 10 օրով բանտարկութեան։

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ճարպակալումը, սրտի սկլէրօզը, սրտի բաբախումը եւ թանչոցը, Նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, զառամութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել **„ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ„** անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանօտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կօպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

(№ 1) (II. 8663) 0—8

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петербургъ.
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—o—

Դրամա

Թատրօնի ղեկավարները նոյնպէս գիտակցում են ներկայ ժամանակի տրամադրութիւնը։

Այսօր հասարակութիւնը չէ հետաքրքըրվում «պրօբլեմներ» լուծելու ձգտող պիէսներով։ Այսօր նրա առանց այն էլ լարված նեարդերը չեն կարող հանդուրժել ուժեղ դրամաների կամ ողբերգութիւնների։

Պահանջը այսօրվայ թատրօնական հասարակութեան համար՝ հայրենասիրական ըզգացմունքները գրգռող ներկայացումներն են, թէկուզ «Փէօդօր արքայի» նման աղքատ բովանդակութեամբ։ Միայն թէ հայրենասիրական պիէսներ...

Կամ՝ ինչպէս ընդունված է ասել՝ թեթև կօմէդիաներ, որոնք դիտվում են պարզ հետաքրքրութեամբ, ժամանցի համար սովորաբար։

Այդպիսի պիէսների թւում պէտք է դասել նաև Տրախեմբէրգի 4 գործ. «Чертова кукла»-ն, որի հերոսուհին Աննա Սերգէեվնան է, կոչված «չօրտօվա կուկլա», և որը կատարում էր Իւրիէվան։

Տաղանդաւոր է յիրաւի Իւրիէվան. որպիսի ազատ խաղ, ինչպիսի գրացիօզ շարժումներ, ի՜նչ գեղեցիկ առոգանութիւն։ Ի զուր չէ, որ հասարակութեան սիրելին է նա և ամեն անգամ նրա բեմ ելնելը ընդունվում է ծափահարութեամբ։ Իւրիէվան ստեղծում է իր յանձն առած իւրաքանչիւր դերը։ Աննա Սերգէեվնային նա ներկայացրեց խորհրդաւոր անցեալ ունեցող կնոջ, որ զոհ է եղել ճակատագրին. եղել է կապված մարդկանց հետ մարմնով միայն, մինչդեռ նա փափագում էր հոգեկան կեանք ևս։ Եւ նա պատահմամբ ընկնում է Պոտագինայի ընտանիքը, մասաժիստկայի անուան տակ, ուր նա հանդիսանում է նրանց համար «չօրտօվա կուկլա»։ Այստեղ նա մերժում է Վիկտօրի (Բախմետիէվ) առաջարկութիւնը, որ դրամի ոյժով էր կամենում կենակցել նրա հետ։ Այստեղից նա հեռանում է մօտակայ գիւղը նրա համար, որովհետև Պոտագինայի աղջիկ Օլգան (Ազարինա) խանդում էր իր նշանած Գիօրգի Պետրօվիչին, թէ սա իբր սիրաշահում է Աննային։

Բայց պատահմամբ Պոտագինայի ընտանիքն է գալիս ծերունի պաշտօնեայ-ազգական Եակով Իլիչը (Վլադիմիրօվ), որի անցեալ կեանքը համարեա թէ Աննայի անցրած կեանքի յար և նման է։ Եակովը բանում է իր սիրտը Աննայի առաջ, խնդրում է, որպէսզի իր մահը մենակութեան մէջ չը լինի։ Սակայն տակաւին երիտասարդ Աննան չէ կարող միանալ մաշված ծերունու հետ, թէև նրանց ներքին կեանքերը զուգադիպում են իրար։ Միայն նա համաձայնում է գնալ Եակովի հետ միասին այն պայմանով, որպէսզի նրանցից ամեն մէկը ապրէ իր կեանքով։

Ամբողջ պիէսի հիւսուածքը ռուսական ժամանակակից կեանքից է վերցված։ Վէբէն ատրիճանի հարազատ գծերով պատկերանում է գաւառական իսպրաւնիկի տիպը, որ վարպետօրէն ու շնորհալի կերպով ամբողջացրեց Դոնսկօյը։ Նոյնպէս աջող է սպասաւոր Կուզմայի տիպը, որ կատարում էր Տուգանօվը բնորոշ կերպով։

Պիէսի մէջ մուծ է ֆրանսիացի Բարբոյի դերը։

Սովորականի նման աջող էին Բախմետիեվը և սրա մօր դերակատար Դոբրօվօլսկայան։

Պիէսի հետաքրքրութիւնը սկսվում է երկրորդ արարուածից միայն և, ինչպէս սկզբում յիշեցինք, լի է կուշտ ծիծաղ առաջացնող տեսարաններով։

Բեմայարդարումը հմուտ ռեժիսեօրի ձեռքի տակ է։

Թատրօնը լի էր։

Այսօր, ներկայացման ամբողջ հասոյթը յօգուտ վիրաւոր զինուորների է։ Սկզբում կը լինի ապօթէօզ։ Խաղացվելու է մեզ արդէն ծանօթ «Ռազմի ընկերներ» գեղեցիկ պիէսը։ Ինչ ասել կուզէ, որ թատրօնը ծայրէ ծայր լի պէտք է լինի։

Ն.

ԴԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Հայոց ներկայացում նոր Բագւում

Շիրվանզադէի «Նամուսը»

Բագու, 10 հոկտ.

Հոկտեմբերի 9-ին տեղի ունեցաւ հայոց երկրորդ ներկայացումը։ Բեմ հանվեց Շիրվանզադէի «Նամուսը»։ Այդ պիէսի բովանդակութիւնը յայտնի է ամենքին։ Շիրվանզադէն պատկերացրել է հայ քաղքենի միջավայրը, որի մէջ տիրում են դարերով դարբնված աւանդական հասկացողութիւններ ու սովորութիւններ։ Աւանդականութիւնը այդտեղ սրբազան օրէնքի ոյժ ունի. նա է սրբագործում մարդկանց առտնին և ընտանեկան յարաբերութիւնները. նա է ջանում կայունութիւն տալու քաղքենիութեան գոյութեանը։ Հարկաւ, այդ միջավայրում մարդիկ սիրում են պայմանականը, որ յայտնի է, որ այնքան ժամանակ ղեկավար սկզբունք է եղել, իսկ ատում նորը, որ սասանում է կայուն հասարակակարգի հիմքերը, շփոթ է մտցնում մարդկանց գործերի ու խոհերի մէջ։ Շիրվանզադէն քաղքենիութեան յամառ հաստատակամութիւնը, պատուի մասին ունեցած գերագոյն նախանձայուզութիւնը, ինչպէս և նրա սահմանափակ ըմբռնումները կոպտութեամբ հանդերձ պատկերացրել է վարպետի վրձինով։

Դերասանական խումբը զգում էր իրան հայրենի միջավայրում, և խմբի անդամներին ընտանի էին հերոսների ապրումները։ Ստեփանեանը (Բարխուդար) իրան պահում էր որպէս պատասխանատու նահապետական հայր և օջախի սրբութեան պահապան։ Նա լիովին ցուցադրեց Բարխուդարի աննկուն կամքը, որը բարին է կամենում իր հարազատների համար, բայց միայն դժբաղդութիւնների դուռը բանում նրանց առաջ։ Շահխաթունին (Սէյրանը) ջահէլ-ջիւան էր, որի համար անձուկ էին եկել հին կարգերը, իսկ նորի մէջ իր տեղը չէր գտել։ Դերասանի արտաքինը նրան դարձնում էր լաւ Սէյրան։ Տիկին Աղամեան (Սուսան) անմռունչ զոհ էր բեմի վրա, բայց նա ծառացաւ, երբ կասկածի առնվեց նրա ամուսնական հաւատարմութիւնը։ Տիկ. Գուլաղեան (Շպանիկ) երես առած միջնորդ էր, ազատ իր շարժումների մէջ, հաճոյախօս, աշխոյժ և իրարանցում մտցնող։ Տիկինը ծափերի տարափի տակ կրկնեց հարսանեկան պարը։ Զարիֆեանը կատարում էր Ռուստամի դերը։ Այդ հոգով ինտելիգենտ դերասանը, որ խմբի կարող ոյժն է, առանձին տղամարդ դարձաւ բեմի վրա։ Լաքան (լրաբեր և հարսանիքի սպասաւոր) իր փոքրիկ դերում անպայման գեղեցիկ էր և բնական։ Աջող թամադա էր Ղազարեանը։ Օվի-Ահարոնեանը բողոքական Մարտիրոսն էր և մեծ շնորհք ցոյց տուեց այդ իմաստակի դերում։ Մնացած դերակատարները միջակ խաղ ցոյց տուին։ Ինչ որ նկատելի էր՝ դա Թաշճեանի թոյլ Հայրապետն էր։

Ներկայացումը գրաւել էր բազմաթիւ հանդիսատեսներ։ Դերասանական խումբը ներկայացումի վերջանալուց յետոյ ողջերթ մաղթեց Շահխաթունուն և խաչ պարգևեց նրան, քանի որ երիտասարդ դերասանը զէնքի է կոչվում պատերազմի պատճառով։ Շահխաթունին շնորհակալութիւն յայտնեց ընկերներին և հասարակութեանը, յայտնեց, որ նա բեմի զաւակ է և յոյս ունի նորից ողջ ու առողջ ծառայելու հայ թատրօնին։

Դ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թիֆլիս, 10 հոկտեմբերի

Կ. Հ. Բ. Ընկ. «Հայկական Հիւանդանոցում» յանձն են առել մի-մի մահճակալի պահպանութեան և կահաւորման համար՝ Տ. Ա. Մելիքեանը և Ն. Վ. Կուսիկեանը։ Ստացվել են հետևեալ նուիրատուութիւնները. տիկին Ե. Ի. Հէջուբեանից՝ 100 ր., տ. Հ. Գ. Մարտիրոսեանից՝ 25 ր., տ. Մ. Մ. Շխեանից՝ ամսական 10 ր. մինչև պատերազմի վերջանալը, տ. Ա. Աղայեանից՝ 10 զոյգ գուլպաներ, 10 հատ շապիկ, 10 հատ վարտիկ, Ն. Ս. Վարդապետեանից ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Ստ. Վարդապետեանի՝ կահաւորված մէկ երկաթէ մահճակալ, 35 կտոր սպիտակեղէն, ճաշարանի պիտոյքներ և 45 կտոր գրքեր։

Խորհուրդ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՓԵՐԻՑ

—

Դպրոցը փակված

Ուրմի, 20 սեպտ.

Կարծես տեղիս դպրոցի ճակատագիրն է մի տարի բաց, մի տարի փակ մնալը։ Անցեալ տարվայ այնքան ջանքերը այս տարի ջուրը թափվեցին։ Այս տարի, սակայն, ռուս-թիւրքական պատերազմի սպառնալիքի պատճառով է փակվում (Ուրմիան այդ դէպքում վտանգված է համարվում), ապա միւս տարիները ինչու կանոնաւոր չեն եղել դըպրոցի գործերը, ինչու մի տարի փակ, մի տարի բաց է եղել։ Մենք կարծում ենք, որ դրա պատճառը ոչ այնքան տեղական հայ ժողովուրդն է, ինչքան վերին հսկողութեան պակասութիւնը։ Եթէ թեմակալի կողմից աչալուրջ հսկողութիւն լինի, Ուրմիայի պէս տեղում միշտ էլ կարելի է լաւ հիմքերի վրա դրված հայոց դպրոց տեսնել։ Այ օրինակ. դպրոցական շէնքի գործը նոյն բանն է. թէպէտ և հայ ժողովուրդն ինքը յղացաւ ու չափեց-ձևեց, նոյնիսկ մօտ 4000 ր. ստորագրութիւն հաւաքվեց, սակայն այդ ամենը մնացին իրանց խանձարուրի մէջ, խօսքը գործ չը դարձաւ, որովհետև պակասում էր մի հեղինակաւոր ոյժ։ Նոյնիսկ փողերը չը գանձվեցին. իսկ այսպիսի դէպքերում, երբ ժողովուրդը այսպէս թէ այնպէս՝ փողը տալիս է ու չի հետևում, այդ հեղինակաւոր ոյժը ներկայանում է թեմակալը ինքը։ Այն ինչ՝ Ատրպատականի թեմ. իշխանութիւնը մինչև օրս էլ ոչ մի գործնական քայլ չի արել Ուրմիայի դպրոցական շէնքի գաղափարն իրականացնելու համար։ Եթէ առաջնորդը գոնէ մի անգամ գար մեր քաղաքը, ամենայն հաւանականութեամբ՝ նա կը կարողանար գործը գլուխ բերել։ Այժմ արդէն ուշ է, եղածն էլ փակվեց։

Համլիկ

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

—

◆ Հայաստանի զանազան տեղերից նոր գանգատներ են գնացել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին՝ թիւրքաց իշխանութիւնների և քիւրդերի գործ դրած ճնշումների դէմ։ Պատրիարքն անկարող է ոչինչ անել ի նկատի ունենալով թիւրք ղեկավար շրջաններում սկսված փոխադարձ դաւերն ու ընդհարումները։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ զինուորական դատարանը մահվան պատժի ենթարկեց երեք հայերի, որոնք կասկածվել են Էնվէր փաշայի դէմ նիւթված դաւադրութեան մէջ։ Ձերբակալվել են շատ դաշնակցականներ։ Հայերի տներում խուզարկութիւնները սաստկացել են։

◆ Կ. Պոլսից մասնաւոր տեղեկութիւն են յայտնում, թէ վերջին օրերս թիւրքաց կառավարութիւնը ձերբակալում է նաև հնչակեաններին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻԶԻ համալսարանից

Մի երիտասարդ

«Բրէսլիցի» մեթօդով ցանկանում է ֆրանսերէն և անգլիերէն դասեր տալ, շատ դիւրին պայմաններով։

Դիմել Արմեանսկի բազար՝ Մատթէ Աղնաւուրեանի կոնդիտերեան խանութը։

934. 2—1

Բագուի հայկական գաղութի (Էրմանիքէնդի) ս. Թարգմանչաց եկեղեցու համար հարկաւոր է մի ձայնեղ

ՏԻՐԱՑՈՒ

հմուտ եկեղեցու արարողութիւններին և ձայնագրութեան։ Ռոճիկ ամսական 20 ր. և արդիւնք մօտաւորապէս 40 րուբլի ամսական։ Դիմել երէցփոխ Գրիգոր Բադրեանին. Баку, Армянскій Поселокъ.

926։ 4—4

Գիւղատնտեսական Բիւրօ

Գիւղատնտեսութեանը եւ կօօպերացիային վերաբերող խորհուրդներով իրան դիմողներին

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Ընդունում է ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) առաւօտ. ժ. $8^1/_2$-ից մինչև $10^1/_2$-ը, երեկ. ժ. $5^1/_2$-ից մինչև $7^1/_2$-ը։ Թիֆլիսից դուրս եղած գրաւոր դիմումներին պատասխանվում է անմիջապէս. պատասխանի համար պէտք է ուղարկել 2 հատ 10 կօպէկանոց պօստային մարկաներ։

Հասցէն՝ Թիֆլիս, Бебутовская № 6.

(Ե. Հ. Կ.) 921. 0—4

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Լ. ՏՈԼՍՏՈՅԻ հետևեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրխաթեանի . . . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . . 5 կ.
4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.

0—2

ԻՆԺԵՆԵՐ

Ի. Ս. ՊՈՆԴՈՅԵՎ

Չըմուշու չուգունէ և ցինկի խողովակներ իր ֆասօնային մասերով։

ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ

ՑԵՄԵՆՏ, ասֆալտ, գուդրօն, կրակի դիմացող աղիւս եւ կաւ, մեխեր, ամեն չափի եւ այլ [illegible] շինութ. համար։

ԵՐԿԱԹԵ ԳԵՐԱՆՆԵՐ
ԿԱԹՍԱՅԻ ԵՐԿԱԹ
ԱՆԿԻՒՆԱՅԻՆ ԵՐԿԱԹ
ՏԱՆԻՔԻ ԵՐԿԱԹ
(սեւ եւ ցինկով պատած)
(14, 28)

— ԹԻՖԼԻՍ —
Նիկոլայէվսկայա, 164, անկիւն Բակինսկայա փ.
— Տէլէֆօն գրասենեակի № 123. —

Կան մեծ քանակութեամբ պատուհանի ապակիներ։

34. 32—27

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный